№ 55 ՇԱԲԱԹ, 13 ՄԱՐՏԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 13 ՄԱՐՏԻ № 55

Տարեկան գինը 10 ռուբլի․ կէս տարվանը 6 ռուբլի․
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ․
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը․
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)․
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ․
Տպարանի տելեֆօն № 228

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն․ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». TIFLIS, Rédaction «MSCHAK».

ՄԱՐՏԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ
9 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ռ., 6 և 7 ամսվ. 6 ռ., ամսակ. 1 ռ․ Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ռ., Թիւրքիա՝ 120 ղրուշ։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն, նոյնպէս և 40 կոպ․ (կարելի է և նամականիշով)։

Յայտարարութիւնների համար վճարում են. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.։ Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и Ко" ֆիրմայի միջոցով Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ

Հայրապետ Ռուստամեան ԶԱՐԳԱՐԵԱՆՑԻ

այրին, որդիները, դուստրները, հարսները, թոռները, եղբօրորդին և փեսաները յայտնում են իրանց անկեղծ շնորհակալութիւնը բոլոր նրանց, որոնք յարգեցին հանգուցեալի յիշատակը կամ անձամբ ներկայ լինելով ամբիծքին ու թաղմանը, կամ ցաւակցական հեռագիրներ ու նամակներ ուղարկելով. 293․ 1—1

ԵՍ, ԱՆՆԱ ՉԻԼԼԵԱԳ,

աճեցրել եմ իմ անսովոր երկար (185 սանտիմէտր երկար․) մազերս—որ յիշեցնում է Լօրէլէյի մազերը—շնորհիւ իմ հնարած առանձին պօմադայի 14-ամսեայ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ։ Այդ պօմադան ճանաչված է լաւ միջոց մազերը թափվելու դէմ, միևնոյն ժամանակ նպաստում է նրանց աճման և արմատների ամրացման։ Տղամարդիկ, շնորհիւ այդ պօմադայի, ունենում են խիտ և ճոխ երկար միրուք, նոյնպէս և (մինչև անգամ կարճ ժամանակեայ գործածութիւնից յետոյ) գլխի մազերի և միրուքի իսկական փայլ։ Միևնոյն ժամանակ պօմադան պահպանում է մազերը շուտ ճերմակելուց, նոյնիսկ ծերութեան ժամանակ։

Բանկայի գինը

3 եւ 5 ռուբլի

Գլխաւոր պահեստը ԴԵՂԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵՒՏՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ մէջ, Թիֆլիսում, Բագւում և Բաթումում։ (շ. հ.) 85 (առ.). 25—15

Թիֆլիսի Ժողովարան

Այսօր, շաբաթ, մարտի 13-ին
տեղի կունենայ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Երեկոյթին կը նուագեն ՍԱԶԱՆԴԱՐՆԵՐ
Հիւրերը՝ անդամների առաջարկութեամբ՝ վճարում են մուտքի համար 1 ռուբլի։
(ա.) 290․ 1—1

ԽՈՆՋ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ

«Մշակի» ներկայ համարում զետեղված «Հայ գիւղը ու նոր կուլտուրան» յօդուածի հեղինակը մի հարց է տալիս. — Ո՞վ պէտք է նորութիւններ մտցընէ գիւղ, ո՞վ պիտի ցոյց տայ գիւղացուն հին անպէտքութիւնը և նորի կարևորութիւնը։

Եւ ինքը պատասխանում է, որ այդտեղ պէտք է միացած գործեն գեղջուկն ու քահանան, ուսուցիչն ու գիւղատնտեսը և զանազան ընկերութիւններ։

Անշուշտ, այդ այդպէս է. պէտք է միացած ջանքերով գործեն թէ տեղական տարրերը և թէ ղեկավարող հրահանգիչ ոյժերը։

Եւ ահա այդ միացած ջանքերը առաջ բերելու, հրահանգչական ծրագիրները կատար ածելու համար անհրաժեշտ է յատուկ հոգատարութիւն, անհրաժեշտ է կազմակերպված սիստեմական գործունէութիւն։

Անկասկած՝ դժուար կը լինէր ներկայումս ամէն մի գիւղի մէջ ստեղծել կուլտուրական համախմբումներ, զանազան տեսակ ընկերութիւններ և հաստատութիւններ, բայց ամէն մի գիւղական մեծ շրջանում կան կէտեր, որոնց նախաձեռնած գործերը օրինակ են դառնում և շրջակայքի համար։

Սկսելով փորձերը այն տեղերում, ուր ներկայումս կան փոքր ի շատէ նպաստաւոր պայմաններ նոր կուլտուրական գործունէութեան համար և ամէն ջանք թափելով, որ այդ փորձերը աջող հետևանքներ ունենան, մենք հարթում ենք ասպարէզը աւելի ընդարձակ առաջադիմութեան համար։

Կուլտուրական այդ դերակատարութեան մէջ մեծ տեղ է վերապահված մի կողմից տեղական համախմբումներին, իսկ միւս կողմից հրահանգչական գործողներին։

Երբ կան տեղական համախմբումներ, այն ժամանակ հրահանգչական գործը հեշտանում է, որովհետև գիւղ եկած հրահանգիչը գիտէ ում դիմել և ում միջոցով տարրացնել ժողովրդի մէջ այն գիտելիքները, որ անհրաժեշտ է տարածել նրա մէջ։ Երբ տեղական համախմբումները գործում են, այն ժամանակ գիւղատնտեսական ընկերութիւնները, մամուլը, զանազան հաստատութիւնները կարողանում են հեշտութեամբ տալ գիւղին այն, ինչ որ կախված է իրանցից։

Թիֆլիսի Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութիւնը որոշել է առաջիկայում ունենալ իր յատուկ հրահանգիչը կամ ինստրուկտորը, որը պէտք է այցելէ որոշ շրջաններ և գործէ մշակված ծրագրով։ Շրջիկ հրահանգիչը, այցելելով զանազան գիւղեր, կը տայ անհրաժեշտ ցուցումներ գիւղատնտեսական բարւոքումների համար, կը դրդէ տեղական գործողներին չը թմրելու և չը կազմալուծվելու, կը կապէ տեղական գործողներին զանազան կուլտուրական հաստատութիւնների հետ և այդպիսով կը կատարէ գիւղատնտեսական տեսչի դեր։

Դա գործելու եղանակներից մէկն է։ Եւ եթէ աջողվի նրան իրագործել աջող կերպով, նա կարող կը լինի բեղմնաւոր արդիւնքներ առաջ բերել։ Գիւղատնտեսական տեսչութիւն եղած ժամանակ տեղական հատ-հատ և կղզիացած ոյժերը կը ստանան աջակցութիւն և յենակէտ՝ շարունակելու իրանց անհատական գործունէութիւնը յուսալով հրահանգչի պաշտպանութեան վրա։

Եթէ միևնոյն ժամանակ միջոցներ ձեռք առնվեն շրջանային տեղական ցուցահանդէսներ կազմելու, համագումարներ և խորհրդակցութիւններ հրաւիրելու, կրթարաններ հիմնելու և զանազան տեսակ հիմնարկութիւններ հաստատելու, այն ժամանակ կամրանայ կուլտուրական գործունէութիւնը երկրի մէջ և նա նորանոր միջոցներ կը մշակէ իր ընդարձակման և զարգացման համար, մուտք գործելով երկրի ամենախուլ անկիւնները և կապելով բոլոր արդիւնարար ոյժերը համերկրային բեղմնաւոր տնտեսական և գեմստվային աշխատանքի համար։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 11 մարտի

Սերբիական Թագաւորը այցելեց մինիստրների խորհրդի նախագահին, արտաքին գործերի, զինւորական և ֆինանսների մինիստրներին։ Ցերեկվայ ժամը 2-ին Թագաւորը ընդունեց Պետերբուրգի կողմից ներկայացած պատգամաւորութեան, որ արծաթէ սկուտեղի վրա մատուցեց աղ ու հաց։

Թագաւորը այցելեց Պետրոս-Պօղոսի տաճարը և արծաթէ պսակներ դրեց Ալէքսանդր II և Ալէքսանդր III Կայսրների դամբարանների վրա։ Այցելելով ս. Յարութեան տաճարը, Թագաւորը այցելեց միտրոպօլիտ Անտօնիին։ Միտրօպօլիտը օրհնեց Թագաւորին Ալէքսանդր Նէվսկիի պատկերով և մատուցեց մի ալբոմ վանքի տեսարաններով։ Խօսակցութեան ժամանակ միտրօպօլիտը մատնանշեց ուղղափառ դաւանութեան նշանակութեան վրա սլաւօն ժողովուրդների համար։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 11 մարտի

Գրողների համագումարը տեղի կունենայ Զատկի շաբաթին, եթէ մասնակցողների թիւը մեծ լինի։ Այն գրողները, հրատարակչական և գրականական հաստատութիւնները, որոնք չեն ցանկանում համագումարի յետաձգումը, հրաւիրվում են կազմակերպիչ յանձնաժողովից՝ հեռագրով յայտնել ոչ ուշ քան մինչև մարտի 17-ը Գրաչօվսկիին, Զագօրօդնի։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 11 մարտի

Հաւասին հաղորդում են Ադդիս-Աբէբայից. «Նէգուս Մէնէլիքը մահամերձ է։ Կայսրուհի Տաիտուն գահընկեց եղաւ, նրան հարկադրեցին հեռանալ պալատից։ Ցեղերի պարագլուխները երդվեցին հաւատարիմ մնալ նոր Նէգուսին։ Ամէն ինչ հանգիստ է»։ (Հ. Գ.)

—

Հռոմ, 11 մարտի

Ստեֆանիի գործակալութեանը հաղորդում են Ադդիս-Աբէբայից. «Ցեղերի պարագլուխները որոշեցին թոյլ չը տալ կայսրուհուն միջամտել պետական գործերին, անվաւեր յայտարարել կայսրուհուց բղխող բոլոր զինւորական կարգադրութիւնները, վերահաստատել նախկին իշխանաւորներին։ Յոյս կայ, որ ճգնաժամը վերջանայ առանց միջադէպերի»։ (Հ. Գ.)

—

Հաագա, 11 մարտի

Թագուհին մի մասնաժողով նշանակեց, ներքին գործերի մինիստրի նախագահութեամբ, սահմանադրութեան վերաքննութեան հարցի մասին խորհրդակցելու համար։ (Հ. Գ.)

—

Հռոմ, 11 մարտի

Ստեֆանիի գործակալութիւնը հաղորդում է, որ ֆօն-Բէտման-Գօլվէգի Հռոմ այցելելը նոր ապացոյց եղաւ այն սրտագին վստահութեան, որ միացնում է Գերմանիային և Իտալիային։ Բերլինի և Հռոմի կաբինէտները լիակատար համաձայնութեան մէջ են Վիէննայի կաբինէտի հետ, առանձնապէս երբ հարցը վերաբերում է status-quo-ն Բալկանեան թերակղզում պահպանելուն։ Նրանք համակրանքով են վերաբերվում դէպի Թիւրքիայի սահմանադրական զարգացումը, ինչպէս նաև դէպի բալկանեան պետութիւնների առաջադիմութիւնը։ (Հ. Գ.)

—

Հռոմ, 11 մարտի

Պատգամաւորների պալատի նախագահը մերժեց Թագաւորի առաջարկութիւնը կաբինէտ կազմելու։ (Հ. Գ.)

—

Լօնդօն, 11 մարտի

Հնդկական տօնը մահմեդական տօնի հետ զուգադիպվելու պատճառով երկվանից անկարգութիւններ են, կռուումներ. սպանվեցին երեք մահմէդական և երկու հնդիկ, վիրաւորվեցին 40 հոգի։ (Հ. Գ.)

—

Կատանիա, 11 մարտի

Մի քանի օր է, որ Էտնան գործում է։ Տաք ճեղքերից լաւան հոսում է մոխրախառն։ Լաւայի տակ մնացել են մի քանի այգիներ և շատ տներ։ (Հ. Գ.)

—

Էպիր, 11 մարտի

Քաղաքը գրաւված է զօրքերով։ Կարգուկանոնը վերահաստատվեց։ Կատարվեցին բազմաթիւ ձերբակալութիւններ։ (Հ. Գ.)

—

Սօֆիա, 11 մարտի

Կազմվեց մի յանձնաժողով Սօֆիայի բոլոր լրագիրների ներկայացուցիչներից սլաւօն ժուրնալիստների կօնգրէսի նախապատրաստական աշխատանքների համար։ (Հ. Գ.)

—

Կահիրէ, 11 մարտի

Եկաւ Րուզվէլտը և այսօր և եթ ընդունվեց խըդիվից։ (Հ. Գ.)

—

Լօնդօն.—Անգլիական շատ լրագիրներում տպված է բողոք ռուսաց կառավարութեան Ֆինլանդիայի նկատմամբ վարած քաղաքականութեան դէմ, նման գերմանացի պրոֆէսօրների բողոքին։ Անգլիական բողոքի տակ ստորագրել են մի խումբ ուսումնական անգլիացիներ, գերմանացիներ, ֆրանսիացիներ և հօլլանդացիներ։ («Б.»)

—

Պետերբուրգ.—Լուրերին նայած, ղեկավար շրջաններում դժգոհ են ֆինլանդական գեներալ-նահանգապետ Զէյնից, գտնելով նրան այնքան էլ ոչ եռանդոտ գործիչ։ Դրա հետ միասին խօսում են ֆինլանդական վարչական կազմի մէջ նախագծվող փոփոխութիւնների մասին։ («Б.»)

—

Վարշավա.—Ութերորդ օրն է տեղական պօլիտեխնիկումում գործադուլ է։ Ինստիտուտը դատարկ է։ Գիշերս կատարվեցին բազմաթիւ ձերբակալութիւններ ուսանողների շրջանում։ («Б.»)

—

Գանձակ.—Գիշերս կրակոտ հրացանաձգութիւնից յետոյ պրիստաւ Խօյսկին աջողվեց սպանել Զաքաթալայի բանտից փախած և մահվան դատապարտված Մամէդ-Սօիւն Իսմայիլ-օղլուն։ («Б.»)

—

Մի քանի օր առաջ Իտալիան և նրա հետ ամբողջ գիտնական աշխարհը տօնեց հռչակաւոր աստղագէտ Ջիօվաննի Վիրգինիօ Սկիապարելլիի եօթանասնամեակը։ Այդ գիտնականը յայտնի է գլխաւորապէս իր ուսումնասիրութիւններով Հրատ մոլորակի մասին։

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Կ. Պօլիս, 11 մարտի

«Սաբահը» ընդգծելով Ռուսաստանի ձգտումը՝ ստեղծել բալկանեան կօնֆէդէրացիա՝ ասում է, որ դրանով հակադրվում են ապագայի աշխարհային քաղաքականութեան հիմունքները, որ կը վերստեղծէ ժողովուրդները փոխադարձ խաղաղ մերձեցման հողի վրա։

Անցեալ գիշեր Մուհամմէդ մարգարէի ծննդեան յիշատակի առիթով մզկիթները, արքունական շինութիւնները, զինւորական դաստարանները լուսավառված էին։ Այսօր սուլթանը աղօթեց Ստամբուլում՝ Անհէդի մզկիթում։

Ակ-մէյդան հրապարակի վրա մզկիթի առաջ տեղի ունեցաւ զօրահանդէս։

Ֆերդինանդ Թագաւորն առաւօտեան ներկայ եղաւ ֆրանսիական դեսպանատան եկեղեցու պատարագին, յետոյ բօլգարական միսիայում ընդունեց բօլգարական համայնքին, անձամբ այցետոմսեր թողեց դեսպանների մօտ։

Կէսօրից յետոյ բօլգարական զոյգը դիտեց Ստամբուլի մզկիթները։ Բօլգար մինիստրները կէսօրին խորհրդակցեցին մեծ վէզիրի և արտաքին գործերի ու առևտրի մինիստրների հետ։ (Հ. Գ.)

—

Տօկիօ, 11 մարտի

Փակվեց պարլամենտի նստաշրջանը։ (Հ. Գ.)

—

Սալօնիկ, 11 մարտի

Մօնաստիրի ալբանական կենտրօնական կլուբը մարտի 15-ին Մօնաստիրում գումարում է բոլոր ալբանական կլուբների կօնգրէս, որի գլխաւոր նպատակն է ուժեղացնել լատինական գրերի պրօպագանդան։

Դէմիր-Հիսարի շրջանում բօլգարական հրոսակախումբ երևալու առիթով խուզարկութիւններ կատարվեցին մի շարք գիւղերում։ Խուզարկութիւնները ապարդիւն են։ Ձերբակալված են տասը մարդ։ (Հ. Գ.)

—

Կ. Պօլիս.—Պարլամենտում ազգայինները և ժողովրդական կուսակցութեան անդամները հարց բարձրացրին վերացնելու գիւղական հասարակութեան համար հացահատիկների քայքայիչ տասանորդը և «աղնամա» կոչված հարկերը։ Առաջարկութիւնը ջուրն ընկաւ երիտասարդ-թիւրքերի ձայներով։ («Б.»)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թաւրիզ, 11 մարտի

Մինչև օրս ներքին փոխառութեան ստորագրութիւնը տուեց 260 ռուբլի։ (Հ. Գ.)

—

Թէհրան.—Արտաքին գործերի մինիստրութիւնը Բուխարայից յուզալի տեղեկութիւններ է ստանում, թէ սարթերը և պարսիկները միմեանց վիրաւորանքներ են հասցնում։ Ջարդի ուրուականը հեռու չէ։

Բոլոր մինիստրների օգնականները փոխարինվեցին նոր երիտասարդներով։ («Б.»)

—

Լէնքօրան.—Այստեղ ամէն օր նորանոր տեղեկութիւններ են ստացվում կողոպուտների մասին, որոնք կատարվում են պարսիկ աւազակների ձեռքով սահմանագլխին։ («Б.»)

ՊՈԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Կ. Պօլիս, 3 մարտի

Բարեկենդանի զինովութիւնը կը շարունակուի տակաւին. մեծ պահքի առաջին օրը, իբրև վաղորդայնը նախընթաց օրերուն և յունական տօն, աւելի մեծ ոգևորութեամբ կը չէշտուի. գիշերային երեկոյթները աւելի տաք են, պարահանդէսներու մնացորդները իրարու կը յաջորդեն։ Օդն ալ, յանկարծական ձիւնաբերքէ մը ետքը, ժպտուն է գարնան գեղով և քաղցրութիւնով։

Ատոնց հետ խառն է քաղաքական բարեխառնութիւն մը. երկրին մէջ, այլևայլ կողմեր, հին կարգերը իսկապէս կը քայքայուին, ու տեղ-տեղ երևցած յետադիմական ստուերները կանցնին կերթան մթին հորիզոններու տակ։ Բուլղարական սահմանագլուխի արիւնոտ բաղխումները, որոնք բաւական սպառնալից երևցան առաջին րոպէին, այսօր կը կորսնցնեն իրենց բուռն տպաւորութիւնները։ Մեր պարլամենտն ալ քիչ մը աւելի լրջացած երևոյթ մը ունի. երեսփոխաններէ կազմուած պատգամաւորութիւն մը վարչապետին դիմում ընելով՝ կարգ մը դիտողութիւններ ներկայացուց զէնքի կոչուած ոչ-իսլամ նոր զինուորներու համար և խնդրեց, որ, հնար եղածին չափ, օրէնք և արդարութիւն գործ դրուին, այնպէս որ բնաւ տեղիք չըրուի խտրական կասկածներու։

Քանի մը օրէն ալ, յաջորդաբար, հիւր պիտի ունենանք բալկանեան իշխանութեանց երկու թագակիր ներկայացուցիչներ, Սերբիոյ և Բուլղարիոյ Թագաւորները։ Այժմէն մեծ պատրաստութիւններ կըլլան զանոնք ընդունելու իրենց դիրքին վայել հիւրասիրութեամբ։ Հաւանական է, որ մեր բարի կայսրը իր հիւրերուն ընդ առաջ երթայ մինչև Սիրքէճիի կայարանը։

Թիւրք մամուլը, առ հասարակ, բարի գուշակութիւններ կընէ այդ թագաւորական այցելութիւններէն. անշուշտ պիտի խօսքեր ըլլան կարգ մը հարցերու մասին, ոքոնք դրացի երկիրներու մէջ յանկարծական ատելութեանց ու արիւնալից ընդհարումներու տեղի կուտան: Տայր Աստուած, որ մակեդոնական գժտութեանց հանգոյցը, որ կռիւի և արիւններու գլխաւոր խանձն է, գոնէ չափով մը լուծուէր: Պարլամենտը այդ հարցով զբաղած է արդէն:

Ստոյգ է, որ, ամենէն առաջ, Թիւրքիան պէտք ունի անվրդով խաղաղութեան՝ նոր կարգերն ու կանոնները երկրին մէջ արմատացնելու համար: Բայց Բալկանեան երկիրն ալ, գլխաւորաբար Բուլղարիա, ոչ նուազ պէտք ունի խաղաղութեան, խաղաղ զարգացումի: Հրացանն ու թնդանօթը եթէ Բուլղարիայէն մահեր և աւերքներ պիտի բերեն սահմանագլուխէն անդին, անդիէն արձակուած գնդակն ու ռումբի կլորակները կեանք չէ որ պիտի տանին Թշնամիի սահմաններէն ներս: Եւ Բուլղարիան, այս անգամ, լաւ տեսաւ, որ սահմանադրական Թիւրքիոյ պատերազմական պաշտօնատունը անգործ նստած չէր. զէնքերու դէմ՝ զէնք, բանակներու դէմ բանակ, ռումբերու դէմ պատրաստ է և Կրուպպի թնդանօթներուն աղէտաւոր բերանները են շարուած սպառնալից:

Զէյթունի կաթողիկոսական տեղապահի մասին գրած եմ արդէն, որ յանկարծ, իբրև թէ ձերբակալուած աւազակ մը, Մարաշ տարուած էր զինուորական ատեանին կողմէ: Տեղացի ժողովուրդը ծայր աստիճան յուզուած է: Պատրիարքարանի կողմէ դիմումներ եղան՝ խնդրելու, որ տառապեալ բնակչութիւն մը խաղաղ թողուի իր ապառաժներուն ետեւ՝ իր խղճովը տապկուելու, ժողովրդային բացատրութեան մը համեմատ:

Ու ափսո՜ս, որ այդ արի ժողովուրդը սովատանջ կը չարչարուի, սնունդի համար պէտք կունենայ արմատներու օգնութեանը դիմելու: Կըսուի թէ մահեր ալ տեղի ունեցած են սովի պատճառաւ: Նպաստները, որքան ալ մեծաքանակ ըլլան, բաժնուած հազարաւորներու, չեն կրնար լեցնել այն դատարկ ձեռքերը, որոնք կերկննան դէպի մեզ՝ նպաստ խնդրելու: Ու զէյթունցին սովէն չարչարուի՜…

Մենք պէտք է յուսայինք, որ արևելեան հայերը, մեր այսքան տառապագին օրերու մէջ, անմասն չէին մնար հանրութեան մը ցաւերուն. մօտ երկու տարի է, որ անօրինակ դէպքեր տեղի կունենան, անօրինակ պահանջքներ կը ստեղծուին, և արևելեան բաժինէն դեռ չեղաւ ան, ինչ որ ներելի էր յուսալ: Մեր Միացեալը, որ այնքան նպաստաւորուած էր Կովկասէն, իր յարութեան շրջանին մէջ դեռ ոչինչ ստացաւ Արևելքէն:

Կըսուի, թէ Կովկասը քէն ըրած ըլլալու է՝ ոչինչ օգտուած ըլլալով Պոլիսէն այն շրջանին, ուր արիւնոտ դէպքեր կը ստեղծուէին Կուրի և Արաքսի հայրենիքին մէջ: Գուցէ ճիշդ է ատ, բայց գիտնալ պէտք է, որ այն ատենը այդ դէպքերու արձագանքը ուրախութեամբ կը լսուէր Վոսփորի վրայ և բռնաւորի մը ականջները դաշնակի մը անուշութեամբ կը լսէին մահերու բօթն և արիւնին ձայնը: Պոլսի հայութիւնը, արդէն ճնշուած ու քամուած, դժուար թէ կարենար համարձակիլ օգնութեան գաղափարն իսկ մտքէն անցնել: Ու նաև Պոլիսը, չափով մը միջազգային քաղաք, անշուշտ տեղացի հայերու վրայ դրած ըլլալու է միջազգային դրոշմ մը: Մինչդեռ կարօտ հայութիւնը, սոված հայութիւնը, որ կայ այսօր, Պոլիսէն դուրս է ան, իր հայրենական հողերուն և տեղերուն վրայ է որ կը տառապի: Ու Պոլիսն է դարձեալ, որ կուտայ այսօր և տուաւ մօտ երկու տարիէ ի վեր. գոնէ Կովկասը ձեռք երկնցնէ մեր Զէյթունին ու Միացեալին, երկու սիրելիներու, որոնք իրենց առանձին կոչումովը տեղ ունեցած են հայութեան սրտին վրայ, մէկը իբրև ընկերական հաստատութիւն, որ կեանք տուած է ու պիտի տանի մեր շինական լաճերուն, միւսը իբրև բուռ մը մնացորդ մեր պատմական արիութեան:

Շահէն

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

—

Վան, 1 մարտի

Ճշմարտութեան և արդարութեան համաձայն չէ միշտ գաւառական գրողների բարձրացրած վայնասունն և աղաղակը, թէ երկիրը վերջապէս չէ բարեկարգվում, սահմանադրութիւնը անուանական է միայն, հաւասարութիւն և արդարութիւն սոսկ բառեր են: Սխալ է նոյնպէս երկրում պատահած աւազակային, սպանութեան և այլն դէպքերը համարել միշտ րէակցիայի նախանշաններ, ինչպէս այդ սովոր են անուանել գաւառ. թղթակիցներից շատերը և որոնց արձագանք են լինում Կ. Պոլսի լրագիրներից ոմանք: Ճշմարիտ է, որ գաւառներում յաճախ կարող են պատահել և պատահում են անախորժ դէպքեր, հարստահարութիւններ. ճշմարիտ է դարձեալ, որ ախորժակները, մտքերը միշտ էլ սրված ու տրամադիր են դէպի համիդեան րեժիմը, բայց նրանք դատապարտուել են մնալու իբրև յուռի, սին փափագներ միայն, իսկ կառավարութիւնը անկեղծապէս ցոյց է տալիս ձգտումներ և ջանքեր մեղմացնելու այդ տրամադրութիւնները, մոռացնելու եղեռնական սոխն ու սխտորը և առաջնորդելու երկիրը սահմանադրական խաղաղ և շինարար կեանքով, ուր ամեն մարդ, ամեն ազգ ու ցեղ կարող են առաջ գնալ տնտեսական, կուլտուրական ինքնագործունէութեամբ և յամառ ջանքերով միայն:

Ճշմարիտ է որ տեղից տեղ, նահանգից նահանգ այս տրամադրութիւնները կարող են փոքր ինչ տարբերել, նայելով կառավարող տարրերի անձնական մտումներին, նկարագիրներին, բայց կարելի է տալ փաստեր, որ ընդհանուր ուղղութիւնը, պաշտօնական տակտիկան դէպի լաւն է աւելի քան դէպի վատը:

Մի՞թէ այս ուղղութեանը չենք պարտական այն, որ Բեօռ Հիւսէյին փաշան և ընկերները յուսահատվելով փախել են Պարսկաստան, ու թէև մի ժամանակ կասկածվեց, որ նրանք պատրաստւում են գարնանը յարձակումներ անել սահմանագլխից այս կողմը և երկիրը խռովել, բայց կառավարութիւնը սահմանագլուխը այնչափ լաւ ամրացրեց, որ այդպիսի քայլը անկարելի է դառնում, իսկ այժմ նոյն քիւրդ փաշաները պատրաստւում են կրկին վերադառնալ երկիր, և, ինչպէս լսվում է, դիմումներ են արել կառավարութեանը: Եթէ նրանց դիմումներն ընդունվեն էլ, և անշուշտ կընդունվեն, բայց նրանք էլ չեն կարող վտանգ սպառնալ երկրի խաղաղութեանը և լինել սիւներ միապետութեան: Նրանք էլ պէտք է պարտաւորվեն խաղաղ, նորմալ կեանքով ապրել, քան թէ թալանով և զրկանքներով, ինչպէս այդ արել էին մինչև այժմ:

Յիշածս փաստերից մէկն է այն արհեստական ցուցահանդէսը, որը տեղական կառավարութիւնը փետրվարի 26-ից բաց է արել տեղական արհեստների ցուցադրութեան համար և ուր ցուցադրվել են գլխաւորապէս ոսկերիչների, փորագրիչների, կահագործների, ջուլհակագործների, կանանց ձեռագործների և այլ արհեստական արտադրութիւնների նմուշները: Մի՞թէ մեր Թիւրք հայրենակիցները ամօթ չեն զգում, որ ցուցահանդէսում ոչ մի բան չը կայ Թիւրք մտքի ծնունդ. սա առաւել քան ցաւալի է և անշուշտ այդ ցաւը և ամօթը զգում են թիւրք ղեկավարները և հեռատես դատողները. ցաւում ենք նաև մենք, հայերս, որովհետև մեր դրացի ազգերը որչափ որ յետ մնան կուլտուրայով, այնչափ դժուարանում է նաև երկրի առաջադիմութիւնը, որի անիւը մէկ լուծքով չէ դառնում:

Ցուցադրված առարկաների շարքում կան բաւական գեղեցիկ նմուշներ, մանաւանդ զարդի առարկաներից. բայց առ հասարակ դեռ շատ յետ ենք մնում այն արհեստներում, որոնք կարող էին վեր բարձրացնել երկրի յետ ընկած տնտեսութիւնը և կարօտ չը թողնել երկիրը, գոնէ մի որոշ չափով, օտար արհեստագործութեան:

Իսկ մեր հարուստները դժբաղդաբար չեն էլ մտածում երկրի տնտեսական և արհեստական առաջադիմութեան համար. ոչ միայն չեն մտածում, այլ նաև արգելք են լինում: Տեղացի ջուլհակագործները գործում են, եւրոպական մանածից անշուշտ, մի տեսակ ապրանք, որին անուանում են դօֆ և սատրխիչ, որ գործ է ածվում զգեստների և անկողինների համար: Հազարից աւելի տներ ապրում էին այդ արհեստով, բայց վաճառականները, տեսնելով որ շատ են սպառվում այդ ապրանքները, նրանց նմուշները ուղարկեցին եւրոպական գործարաններին, պատրաստել տուին յար և նման օրինակներ աւելի էժան և աւելի կոկիկ ու փայլուն, նրանցով ողողեցին առևտրական հրապարակը և պատճառ եղան տեղական արհեստագործութեան ընկնելուն և հազարաւորների անգործութեան և թշուառութեան: Տեղացի արհեստագործները շատ անգամ դիմել են կառավարութեան, որ մի կերպ պաշտպանէ իրանց և տեղական արհեստագործութիւնը վաճառականների ընչաքաղցութեան և եւրոպական ողողումների դէմ, բայց մնացել են նրանց դիմումները անհետևանք: Այսպիսիներից երկրի արհեստական առաջադիմութեան համար օգուտ սպասելը նման է ապառաժից բուսականութիւն սպասելուն:

Ցուցահանդէսը տևելու է մի շաբաթի չափ, և ցուցադրված առարկաներից գեղեցիկ կտորները վաճառվելու են 80 ոսկու մի պարգևով, գնահատութեամբ մի մասնաժողովի, որ կազմվել է վալիի նախագահութեան ներքոյ:

Ե՞րբ արդեօք կը լինեն նաև երկրագործական ցուցահանդէսներ, և մեր երկրագործները, գիւղատնտեսները, անասնապահները իրանց գործն էլ կը ցուցադրեն. Երբ կունենանք ասեղնագործ. աշխատանոցներ, չերամապահութեան, մեղուաբուծութեան, գորգագործութեան կարևոր ճիւղեր և արհեստանոցներ, որոնցից միայն կախված է երկրի տնտեսական զարգացումը և բնակիչների ապրուստն ու բարեկեցութիւնը: Սրանցում դեռ շատ յետ է մնացել երկիրը և սպասվում է մի բարերար ձեռքի, որ բաց անի Վասպուրականում մի գիւղատնտեսական վարժարան: Պիտի գտնվի՞ արդեօք երբևիցէ այդ բարերար ձեռքը:

Մարակ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԸ

—

Թիֆլիսի Հայ Գիւղատնտ. Տնայն. և Ընկերութեան վերջին ընդհանուր ժողովի նիստը, որ կայացաւ մարտի 11-ին, նուիրված էր մեծ մասամբ ընթացիկ խնդիրների քննութեան:

Նախագահ Ա. Քալանթար զեկուցեց իր Գանձակ կատարած ճանապարհորդութեան, այնտեղ կարդացած դասախօսութիւնների և տեղական արհեստանոցն այցելելու մասին:

Ժողովը, լսելով վարչութեան պատճառաբանված առաջարկը, որոշեց հրաւիրել յատուկ հրահանգիչ՝ գիւղերը շրջագայելու և գիւղատնտեսական փորձերը ղեկավարելու նպատակով: Հրահանգիչը կը հրաւիրվի առայժմ վեց ամսով:

Այնուհետև զեկուցվեց, որ դիտաւորութիւն կայ 12 տեղերում ունենալ փորձնական հողաբաժիններ զանազան տեսակ սերմեր փորձելու համար:

Նիստին ներկայ գտնվող Ա. Թումանեան զեկուցեց Ղազախի գաւառում Թուզքերդ գիւղում հաստատված կրեդիտային ընկերութեան և Ղազախում գոյութիւն ունեցող գիւղատնտեսական բաժանմունքի մասին:

Դաւիդովի զեկուցումը կրեդիտային հիմնարկութիւնների մասին՝ զեկուցանողի հիւանդութեան պատճառով յետաձգվեց յաջորդ նիստին:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Ղազախ, 9 մարտի

Ամսիս 5-ին Ղազախ հասաւ Կ. Հ. Բ. Ընկ. դպրոցների տեսուչ Ե. Լալայեանը, քննեց ծխ. դպրոցի աշակերտներին բոլոր առարկաներից, խօսակցութիւն ունեցաւ և նրանց ծնողների հետ: Հետևեալ օրը, ամսիս 6-ին, այցելեց Ուզունթալայի, Սև-Քարի, ապա Աղա-Ջուր գիւղի դպրոցները և ամեն տեղ նոյնն արեց, ինչ որ Ղազախում: Ամսիս 8-ին գնաց Քարվանսարա, Վերին-Աղդան, որտեղից Դիլիջանով պիտի գնար դէպի Ղարաքիլիսա:

Աննախանձելի դրութեան մէջ է Ուզունթալայի դպրոցի նիւթականը, ոչ մի աղբիւր չունի բացի Սուրեն ուխտատեղի արդիւնքից, որը հոգ. իշխանութիւնը դրել է դպրոցի հոգաբարձութեան տրամադրութեան տակ. սակայն շատ չնչին բան է այդ: Երեխանց ուսման վճարի ժողովելը կախված է տանուտէրի եռանդից, որից է կախված դպրոցի յարատևութիւնը մինչև մայիս:

Զ. Ք. Ապրեսեան

—

Շուշի, 2 մարտի

Աշոտ եպիսկոպոսը փետրվարի 24-ի վաղ առաւօտեան թողեց Շուշին և գնաց Բագու, իսկ այնտեղից Մայր-Աթոռ: Նա Շուշի է ժամանել 1905 թ. յուլիսի 16-ին, ուրեմն նա առաջնորդական պաշտօն է վարել մօտ 5 տարի: Ի՞նչ արեց նա այդ 5 տարվայ ընթացքում, ի՞նչ գործեր կատարեց, ի՞նչ անմոռանալի յիշատակներ թողեց նա իր ստանձնած հօտի մէջ, վերջապէս ո՞րպիսի վերանորոգութիւն արեց իր հովանաւորութեան տակ գտնվող եկեղեցիներում, հոգևորականութեան մէջ. ընդհանուր առմամբ դրանց պատասխանը բացասական է:

Արդեօք Աշոտ եպիսկոպոսը աւելացրե՞լ է ազգային հաստատութիւնների՝ բարեգործական, կուլտուրական ընկերութիւնների, աղքատանոցների թիւը. արդեօք նա պատսպարե՞լ է ձմրան ցրտաշունչ խիստ բուք ու բորանից փողոցներում, եկեղեցիների դարբասների առաջ դողդոջուն ծերունիներին, աղքատներին, այրիներին, որբերին և փողոցում շրջող խեղճ ղարիբներին. այս ամենի պատասխանն էլ դժբաղդաբար բացասական է: Բայց ի՞նչ է արել: Նա հաստատուն կամք չունենալով հանդերձ՝ սաստիկ փոփոխական էր. ինչ լաւ գործ ուզում էր լինի, ինչ լաւ կարգադրութիւն էլ լինէր, իսկոյն ենթարկվելով մի երկու անձանց ազդեցութեանը՝ կարգադրութիւնը փոխում էր և այդպիսով տեղի տալիս բամբասանքի և ատելութեան: Վերջին ժամանակներս նա իսպառ փոխվել էր, ուզում էր իր բարեկամների և խորհրդատուների թիւն աւելացնել, բայց այդ նրան չյաջողվեց:

Ամարասեան

ՀԱՅ ԳԻՒՂՆ ՈՒ ՆՈՐ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ

—

Վերջին տարիներիս մեր գիւղացու տնտեսութեան անկումը, կամ այլ խօսքով գիւղի քայքայումը, իր վրա է հրաւիրել մեր կուլտուրական ընկերութիւնների ուշադրութիւնը ու ստիպել նրանց իրանց գործունէութեան շրջանը դարձնել դէպի գիւղը, այդ մոռացված ու յետ ընկած անկիւնը:

Եւ ահա շնորհիւ այդ գործունէութեան, գիւղերում առաջ եկան մինչ այդ նրանց անծանօթ նորանոր բաներ. գիւղական բանկերը ազատեցին խեղճ գիւղացուն վաշխառուի ճիրաններից, սպառողական խանութները մատակարարեցին էժան և լաւ մթերքներ, գիւղատնտեսական ամառային կուրսերը և շրջիկ գիւղատնտեսները հրաշալի կերպով ցոյց տուին գիւղացուն, թէ ժամանակ է, որ նա թողնէ իր պապերից ժառանգ ստացած անդրջրհեղեղեան գործիքները և նոր ու կատարելագործված գործիքներով տանէ իր գործը, կրկնապատիկ, նոյն իսկ եռապատիկ աւելի օգուտ ստանալու և այսօրվայ պէս քաղցած ու մերկ չը մնալու համար շարունակ: Գիւղացին այս բոլորը լսեց, աչքով տեսաւ, ձեռքով շօշափեց և ապա միայն գործադրեց կեանքի մէջ:

Այո, գիւղատնտեսական ամառային կուրսերը և շրջիկ գիւղատնտեսները տուին իրանց զգալի օգուտը, սակայն դա միայն մի կաթիլ ջուր էր մեր ծով-կարիքի դիմաց: Եւ իրաւ, մի՞թէ մի քանի գիւղական բանկեր ու սպառողական խանութներ, ազատեցին մեր ընդհանուր գիւղացիութեան վաշխառուի ու խանութպանների ճիրաններից, և կամ մի ամառային դասընթացք ու մի քանի ինստրուկտորներ մի՞թէ կարողա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ԿՈՐԾԱՆՎԱԾԸ» *)

(ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ)

Դրամա 4 գործողութեամբ
«Անահիտ» №№ 3—4, 5—6, 7—8 1909 թ.:

—

Ամեն ինչ շարժվում է, ամեն ինչ փոխվում է բնութեան և հասարակութեան մէջ:

Կովկասի մեծ քաղաքներում ծայր է տալիս հետզհետէ մեքենայական խոշոր արդիւնագործութիւնը, իսկ Բագուն առանձնապէս, կարճ ժամանակվայ ընթացքում, դառնում է խոշոր կապիտալիստների և բազմաթիւ բանւորների քաղաք: Եւ ինչքան շեշտվում է տնտեսական զարգացումը, այնքան աւելի է ուժեղանում հակամարտութիւնը նոյն ազգի տարբեր դասակարգերի մէջ ու այնքան աւելի է կորչում Սենեքերիմների և Արազեանների քարոզը:

Մենք չը պիտի ջլատենք մեր ոյժերը, մենք բոլորս պիտի միանանք և ծառայենք մեր, և միայն մեր ժողովրդին: (Ընդգծումները հեղինակինն են: Գործ. III, տեսիլ III)

Թուլանում են նախկին կուռքի հիմքերը, դասակարգային հակամարտութիւնը անջատում է իրարից ժամանակաւորապէս միացած տարբեր տարրերին: «Նոր մտքերը» մուտք են գործում հայ առաջաւոր շրջաների մէջ, իսկ դա զայրացնում է «աբսոլիւտի» երկրպագու մանր-բուրժուա իդէօլօգներին:

Թո՛յնը մի անգամ բուն է դրել կազմուածքի մէջ,—ասում է Սենեքերիմը յուսահատութեամբ իր բարեկամ Ալվանդեանին,—և պէտք է արագ-արագ տարածվի: Ողորմելի, անտէր հասարակութիւն: Ա՜խ, կը ջախջախէի ոտներիս տակ այն հիդրան, որ կոչվում է սօցիալիզմ: (Գործ. IV, տեսիլ IV)

Ինչո՞ւմն է կայանում նոր մտքերի էութիւնը, որոնց պատճառով Արտաշէսը, Մոսկվայից վերադառնալուց յետոյ, անդադար վէճի մէջ է իր հօր՝ Սենեքերիմի, ինչպէս նաև իր նախկին ընկեր Արազ Արազեանի հետ, և որոնց պատճառով նրա հայրը չէ քաշվում նոյնիսկ Արտաշէսին «ազգավաճառ» անուանելու:

Քանի ես պատանի էի,—ասում է Արտաշէսը Ֆլօրային,—մի տեսակ պատնէշ իմ սրտում անջատում էր ազգութիւնը մարդկութիւնից: Այժմ չը կայ այդ պատնէշը: Խորտակվել է այն համաշխարհային մեծագոյն իմաստասէրների ազդեցութեամբ, որոնց գրքերը կարդացել եմ և յափշտակվել: Ահ, եթէ տեսնէիք այն վայրերը, ուր մարդիկ զգում են և տանջվում բարձր իդէալների համար: Այնտեղ ազգութիւնը չէ այն օղակը, որ միացնում է հոգիները, այլ մի ուրիշ, աւելի բարձր, աւելի ընդարձակ եւ ամուր կապ դէպի մարդը: (Ընդգծումը մերն է. Ա. Զ.: Գործ. II, տեսիլ IV)

Բարձր իդէալների դաւանանքը չէր կարող ստեղծել Արտաշէսի մէջ ատելութիւն դէպի «մայրենի երկիրն» ու նրա տառապեալ հայ ժողովուրդը: Արտաշէսը, ընդհակառակը, խոհունութեամբ հերքում է հօր և Արազեանի մեղադրանքները:

Ես՝ ուխտադրուժ չեմ, մանաւանդ դաւաճան: Ես միայն երեխայական խանձարուրից դուրս եկած մարդ եմ: Տասնեութ տարեկան էի, երբ յափշտակվեցի ձեր շրջանով: Հեռացայ այստեղից, տեսայ ուրիշ շրջաններ, ծանօթացայ աւելի լուրջ և աւելի բարձր իդէալների հետ—փոխվեցի: Լաւ արի թէ վատ—չը գիտեմ, բայց փոխվեցի խելքով, համոզմունքով և սրտիս բոլոր ոյժով…: «Ի՞նչն է ինձ պակասում այն ժամանակից, արդեօք մաքրութի՞ւնը, անկեղծութի՞ւնը, թէ ազնուութի՞ւնը, թէ սէ՞ր դէպի հալածվածները կամ տանջվածները: (Ընդգծումը մերն է. Ա. Զ.: Գործ. III, տեսիլ III)

Եւ եթէ Արտաշէսը չէ բաժանում այլ ևս իր հօր և իր ընկերոջ հայեացքները, ապա այդ այն պատճառով, որ նա չէ հաւատում, թէ միայն հայերի ձեռքով կարելի է ձեռք բերել հայերի ազատութիւնը:

Արազ,—շարունակում է նա,—մարդ կարող է միայն այն գործին ծառայել, որին հաւատում է, այլապէս նրա ծառայութիւնն անբարոյականութիւն է: Ես ձեր գործին չեմ հաւատում: Երկրորդ՝ երբ ամբողջ մարմինը վարակվել է, երբեք նրա անդամները առանձին-առանձին չեն բուժվում: (Գործ. III, տեսիլ III)

Ուտոպիական հիմունքներից մեկնող մանր-բուրժուան ինչքան էլ խիղճ, գթութիւն մուրայ օտարից իր ցաւերի համար, նրա նեղ, սահմանափակ զգացմունքները սահմանափակ շրջանից դուրս չեն կարող ապրել:

Արազեանի նեղ զգացմունքներին թէ՝

Մեր թշուառութիւնն անսահման է, քո (Արտաշէսի: Ա. Զ.) տեսածները մերը չեն: Այդ ամենի համար կան ուրիշ պատերազմողներ: Ինչո՞ւ նրանք չեն թողնում իրանց արիւնակիցներին և գալիս մեզ օգնելու, ասա, օտարամոլ: (Ընդգծումը մերն է. Ա. Զ.: Գործ. III, տեսիլ III):

Արտաշէսը պատասխանում է Թշուառութեան ըմբռնման աւելի լայն հայեացքներով: «Թշուառութիւնը հայրենիք չունի»,—գոռոզաբար բացագանչում է նա: Իսկ Արազեանի վերջին էպիտետի վերաբերմամբ՝

Օտարամո՞լ… Ահա իմ հօր սիրած հայհոյանքը, որ կարծում է մի համոզիչ զէնք է իր ձեռքում: Օտարամոլութիւնը բոլոր ազգերի բռնաւորների արդար դատին ծառայելը չէ, ո՛չ, հազար անգամ ոչ, այլ սխալ գաղափարներին հետևելը: Կրկնում եմ. ես չեմ հաւատում ձեր գործին. ինչպէս ուրեմն ծառայեմ նրան առանց հաւատի: Հեռու չէ այն ժամանակը, երբ կը պարզվի թէ ո՞ւմ իդէալներն են հիմնված աւելի արդար հիմունքների վրա, մե՞րը թէ՞ ձերը: (Ընդգծումները մերն են. Ա. Զ.: Գործ. III, տեսիլ III)

Դէպքերը իսկապէս արդարացրին Արտաշէսին: Հայկական մանր-բուրժուական իլլիւզիաները մնացին իլլիւզիաներ, իսկ օսմանեան միապետութիւնը տապալվեց այն ժամանակ, երբ օսմանեան պետութեան դէմոսը շարժվեց իր ամբողջութեամբ: Սենեքերիմներն ու Արազեանները չէին ըմբռնել պատմական անիւ ընթացքը:

*

Եթէ հայկական մանր բուրժուազիան հայկական ազատագրութիւնը դարձրել էր իր կուռքը, հայկական խոշոր բուրժուազիան անտարբեր չէր դէպի այն: Նման պատճառները սակայն առաջ են բերում նոյնանման հետևանքներ: Լեհական խոշոր բուրժուազիայի պէս, հայկական խոշոր բուրժուազիան էլ այնքան վատ չէ զգացել իրան օտարի տանը. թէ մէկ և թէ միւս խոշոր բուրժուազիայի բուրժուական կոսմօպօլիտիզմը ծնունդ է համարեա նոյն պատճառների:

Հայկական խոշոր բուրժուազիան Կովկասում բոլորովին չէզոք դիրք չէ բռնել հայկական հարցի վերաբերմամբ: Սակայն նրա աջակցութիւնը քիչ-շատ աջակցութեան նմանվել է միայն այն հազուադիւտ վայրկեաններին, երբ հայկական հարցը ամենից աւելի շանսեր է ունեցել աջողութեան: Միւս ժամանակներում նրա մասնակցութիւնը առ առաւելն բարեգործականից դէնը չէ անցել:

«Բարեգործ» բուրժուայի վերաբերմունքը դէպի հայկական հարցը բաւական որոշակի պատկերացրել է մեր դրամատուրգը իր ներկայ աշխատութեան մէջ, յանձին Ալէքսանդր Ալվանդեանի:

Ալվանդեանը հարուստ հայ է, նա Սենեքերիմի լաւ բարեկամն է, որովհետև հաւանում է Սենեքերիմի մտքերը: Իսկ վերջինս սիրում է Ալվանդեանին այն պատճառով, որ նա ժլատ չէ և այն հարուստներից չէ «որոնք ազգին մեծ-մեծ փողեր չեն տալիս»:

Ալէքսանդրին պիտի յարգել,—ասում է Սենեքերիմը,—նա ազգասէր հայ է: (Գործ. I, տեսիլ VI)

Ինչո՞ւմն է կայանում Ալվանդեանի ազգասիրութիւնը:

Մի տեսէք, աղջիկս,—ասում է Ալվանդեան Ֆլօրային,—մահը մերն է, մենք մահինը: Արդէն մօտենում եմ վաթսունին և շատ էլ առողջ չեմ զգում ինձ: Քանի խելքս գլխումս է, պէտք է հոգամ քո մասին: Կտակիս ընդհանուր բովանդակութիւնն այս է: Կարողութեանս կէսը տալիս եմ զանազան ազգային գործերի համար: (Գործ. II, տես. III)

Բայց եթէ Ալվանդեանը հաւանում է Սենեքերիմի մտքերը, եթէ նա նոյն իսկ իր վերջին տեսակցութեան ժամանակ խոստովանում է Սենեքերիմին, որ իր կտակը արդիւնք է նրա գործունէութեան, սակայն նա վերին աստիճանի անհաշտ ու թշնամական վերաբերմունք է ցոյց տալիս դէպի Արտաշէսի «նոր մտքերը»:

Տեսնո՞ւմ ես այս թուղթը,—ասում է նա Սենեքերիմին գրպանից հանելով կտակը,—բոլորն այստեղ է: Այդ քո գործունէութեան պտուղներից մէկն է: Թող քո որդին իմանայ, թէ ո՞ւմ գաղափարներն են մեզ հարկաւոր, նրա՞նը թէ՞ քոնը: (Ընդգծումը մերն է. Ա. Զ. Գործ. II, տեսիլ IX)

Ալվանդեանները կը կենակցէին մանր-բուրժուական «սօցիալիզմի» հետ, իսկ պրօլետարական սօցիալիզմի հետ նրանք բնականաբար չը պիտի կարողանային երբեք հաշտվել:

*

Աւելորդ համարելով մեր դրամատուրգի նոր աշխատութեան այս կամ այն առաւելութիւնների կամ պակասութիւնների մասին խօսելը, ասենք միայն այն, որ նրա ներկայ դրաման, իր տեսակի մէջ, հետաքրքրական է և շահագրգռող: Գլխաւոր պակասութիւնը կայանում է նրանում, որ հեղինակը այն հասարակական շերտաւորումը, որի մասին խօսվեց յօդուածի սկզբում, դուրս չէ բերել ամենայն հարազատութեամբ. շերտաւորման արտաքին արտայայտութիւններն աւելի են գլխաւորաբար նշմարելի, իսկ ներքին էութիւնը թոյլ է արտայայտված: Նոր մտքերի ամենից աւելի պատրաստված և լուրջ ներկայացուցիչը չէ կանգնած մաքուր օբյեկտիվիզմի վրա, նրանում դեռ վառ է իդէալիստական սանտիմենտալիզմը, իսկ այս հանգամանքը բաւական թուլացնում է պիեսի գեղարուեստական նշանակութիւնը:

Թաւրիզ Արշաւիր Չիլինկիրեան

---

*) Տես «Մշակ» № 54.

ցան փոխել ամբողջ գիւղացիութեան տնտեսութիւնը։ Ո՛չ։

Մենք կարօտ ենք նորամուծութեան, անվերջ նորամուծութեան։ Եւ ահա այստեղ առաջ է գալիս մի հարց, որը ամենաէականն է։

Ո՞վ պէտք է նորութիւններ մտցնէ գիւղ, ո՞վ պիտի ցոյց տայ գիւղացուն հնի անպէտքութիւնը և նորի կարևորութիւնը, ո՞վ կը համաձայնի «գլուխ ցաւեցնել» այնպիսի մարդկանց հետ, որոնց շատ դժուար է բան հասկացնել, և վերջապէս ո՞վ իր անմիջական պարտականութիւնը կը համարէ այս բանը։

Ահա գլխաւոր ու ամենաէական հարցը։

Այս ամենը գլուխ բերելու համար պարտական են լըջօրէն մտածել այն բոլորը, որոնք աւելի մօտ են կանգնած գիւղացուն, լինեն դրանք մասնաւոր մարդիկ թէ ընկերութիւններ։ Ահա այստեղ է, որ պէտք է միացած և անխոնջ կերպով գործեն ուսմիկ գեղջուկն ու գիւղական քահանան, ուսուցիչն ու գիւղատնտեսը և զանազան ընկերութիւններ։

Գաւառացի

Ախալքալաք

ՄԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԴԱՍԻ ԱՌԻԹՈՎ

Կովկասի Հայ Ուսուցչական Միութեան նախաձեռնութեամբ կիրակի, մարտի 7-ին, առաւօտեան ժամը 11-ին, կայացաւ ուսուցիչ Ա. Դերզեանի փորձնական դասը Թւաբանութիւնից։ Ներկայ ուսումն. տարւայ ընթացքում սա, եթէ չեմ սխալւում, չորրորդն է, որ կատարւում է նոյն Միութեան նախաձեռնութեամբ։

Մեր նպատակը չէ այստեղ զբաղւել վերջին անգամ աւանդւած դասի քննադատութեամբ. այդ կատարւել է դասից յետոյ նոյն դպրոցում, ուր և մատնացոյց է արւել նրա դրական և բացասական կողմերի վրա։ Այստեղ մենք կը կամենայինք մի քանի խօսք ասել այդ առիթով։

Ուսուցչ. Միութեան վարչութիւնը, կամենալով ծանօթացնել իր անդամներին այս կամ այն առարկայի դասաւանդման եղանակի հետ, պարբերաբար կազմում է փորձնական դասեր. սակայն, որքան նկատել ենք, դժբաղդաբար այդ բարի նպատակին նա չէ հասնում։ Գոնէ այդ եզրակացութիւնը դուրս բերինք՝ ներկայ գտնւելով աւանդւած փորձնական դասերին։ Այդ գործում լուրջ և մտածւած վերաբերմունք չէ նկատւում վարչութեան կողմից, և նոյն իսկ թւում էլ է, թէ նա սխալ է ըմբռնում այդ դասերի նշանակութիւնը։ Դրանք պիտի լինեն ոչ թէ փորձնական դասեր, այլ օրինակելի, և պէտք է տրւեն ոչ թէ անփորձ ուսուցիչների կողմից՝ փորձւելու և վարժւելու նպատակով, այլ փորձւած ուսուցիչների ձեռքով՝ իբրև օրինակելի դասեր անփորձների համար։ Մինչդեռ վարչութիւնը վարւել է միանգամայն դրա հակառակը, հրաւիրելով կամ թոյլ տալով կատարել անփորձներին այդպիսի մի պատասխանատու գործ։ Անփորձներին էլ կարելի է առաջ մղել, սակայն ոչ գործի սկզբից։ Վարչութիւնը արդարանում է նրանով, որ փորձւած ուսուցիչները չեն համաձայնում հրապարակ գալ, ուստի պիտի բաւականանալ և նոյնիսկ շնորհակալ լինել երիտասարդ ույժերին, որոնք գոնէ այդպիսով առիթ են տալիս մտքերի փոխանակութեան։ Եթէ ճիշդ են այդ առարկութիւնները, ապա միայն պիտի ցաւել դրա համար։ Այդպիսի խոստովանութիւն վարչութեան կողմից մեզ ստիպում է շատ աննպաստ կարծիք կազմել մեր ուսուցչութեան մասին։ Պարզ ապացոյց է, որ մենք փորձւած և արհեստին տեղեակ ուսուցիչներ չունենք, ապա թէ ո՛չ մէկն ու մէկը երևան կը գար։

Ինչ վերաբերում է մտքերի փոխանակութեան, որ կամենում են ստեղծել այդ դասերի քննութեամբ, դա, ճշմարիտ է, իր որոշ օգուտը ունի, սակայն ներկայ դէպքում էականը դա չէ, այլ լաւ մշակւած և աջող աւանդւած դասն է, որը իր թողած դրական զօրեղ տպաւորութիւնով կարող է օրինակ ծառայել և ուղեցոյց լինել ուրիշների համար։ Եթէ անկարելի է այդպիսին աջողեցնել, ապա լաւ է, որ վատն էլ տեղի չունենայ, քանի որ դասաւանդութեան նպատակը չէ վատի մասին գաղափար տալ, այլ լաւի։

Գալով այն արդարացի նկատողութիւններին, որոնք անւում են դասը քննելիս, դրանք շատ անգամ աննպատակ էլ անցնում են, և ուսուցիչը կրկին անում է նոյն սխալները, ինչ որ տասնեակ անգամ կարդացել է գրքերում և հարիւրաւոր անգամ լսել ուսուցչ. ժողովներում։ Դրանք վերացւում են աստիճանաբար և տարիների ընթացքում, երբ ձեռք է բերւում փորձառութիւն։ Ուրեմն էականը դա չէ, այլ օրինակելի դասը, որին և պիտի դիմէ Ուսուցչական Միութեան վարչութիւնը։ Ահա թէ ինչ բանի վրա ենք հրաւիրում վարչութեան ուշադրութիւնը։

Հանդիսական

ԽՈԹԱՅ ՎԱՆՔԻ ԿԱԼՈՒԱԾՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Ղարաբաղի թեմում գտնւող Խոթայ վանքի կալուածներում պաշտօնով բուն դրած գանձագեստ գայլերը, որոնց հոգ. իշխանութիւնը «պահապան հրեշտակներ» է անւանում, միանգամայն աւերեցին այդ նշանաւոր կալուածները։ Ժողովրդի, մամուլի, ժամանակաւոր ականատեսների բողոքի ձայնը երկինք է հասնում, բայց հոգ. իշխանութիւնը աղի արժան է կտրւել, ձայն ու ծպտուն չէ հանում։

Գանձասարի և Խոթայ վանքի կալուածները կառավարում է առհասարակ կառավարչի օգնականը իր մի քանի հոգի «զապթիւներով»։

Իրիկունը այստեղ ոտք դնող պաշտօնական «պահապան հրեշտակը» աշխատում է այնպէս աւերել և ուտել կալուածը, որ առաւօտեան այնտեղ ոտք դնողին այլևս բաժին չը մնայ։ Այս կալուածները գուցէ այնպիսի ծանր աղէտի չէին ենթարկւել, ինչպէս որ ենթարկւեցին այս վերջին 3—4 տարւայ մէջ։ Խուրջիններով փողեր դուրս գնացին կալուածից. գրպաններ էին հաստացւում. ոսկին շատերին կոյր ու համր էր դարձրել. և նրանք, որոնք պարտաւոր էին ուշադրութիւն դարձնել այդ աւազակութեան վրա, ոչինչ չէին խօսում և լռում։ Թեմի այժմեան նոր նշանակւած ժամանակաւոր կառավարիչը որքան էլ ընդունակ անձ լինի, դարձեալ ոչինչ չէ կարող անել այդ անիրաւութիւնների դէմ, որովհետև կալուածները գտնւում են մեծ հեռաւորութեան վրա Ղարաբաղից։ Այստեղից Խոթայ վանք գնալու համար հարկաւոր է 4—5 օր։ Կայ մի օձապտոյտ ճանապարհ բարձրագագաթ սարերի վրայով և ահագին ձորերի միջով։ Շնորհիւ ճանապարհների բացակայութեան՝ այս կալուածներից դէպի Ղարաբաղ և այլուրեք մի տաշեղի կտոր անգամ չէ անցնում, իսկ անտառներից արտահանւող գերանը անցնում է դէպի Նոր-Բայազէտի գաւառը Ուռուծբասարի վրայով, որ մասամբ սայլի և կառքի ճանապարհ ունի և յարմարութիւններ է ներկայացնում։ Հէնց այստեղ Նոր-Բայազէտի գաւառում, որ ենթարկւած է Երևանի թեմի իրաւասութեանը, ոչ մի կօնտրօլ չը կայ, և այդտեղի հոգ. իշխանութիւնը ոչ մի իրաւունք չունի Ղարաբաղի թեմի իրաւունքին յանձնւած գործերին միջամտելու։ Ղարաբաղի հոգ. իշխանութիւնը որքան էլ աշխատի, դարձեալ չէ կարող վերջ տալ կալուածներում կատարւող բաշիբոզուկութիւններին. իսկ եթէ կալուածները յանձնւած լինէին Երևանի թեմի իրաւասութեանը, այն ժամանակ քար ու քանդ կը լինէին այդ աւազակային որջերը, կը նշանակւէր խիստ կօնտրօլ թէ տեղն ու տեղը, թէ սահմանում և թէ գաւառի մէջ, որովհետև այստեղ տասը մատների նման յայտնի են, թէ գերանները և վառելափայտը, ածուխը և այլն Նոր Բայազէտի գաւառի դէպի ո՛ր գիւղերն են անցնում։

Օրինակի համար՝ մեր գաւառը ամեն տարի մօտ 10,000 գերան է անցնում, որոնց համար տեղնուտեղը անտառի մէջ վճարում են հատին 1 ր.։ Այդ գերաններ գնող գիւղացիք բողոքում են, որ 100 գերան գնողին տալիս են 10 գերանի ստացական՝ վաւերացւած գրքերից, իսկ մնացած 90 գերանների գինը մտնում է գերաններ բաց թողնողի գրպանը։ Այսպէս շարունակւել է և շարունակւում է, և տեղական ազգաբնակութիւնը, որ միշտ այդ անտառներից է իր հարկաւոր փայտը բերում, սովորել է այդ կարգ ու կանոնների հետ։ Այսպէս՝ տասից մէկը միայն հասնում է վանքին, իսկ ինը մնում է գողերին։

Թէ ինչ տեսակ պայմաններով են պատրաստում այնտեղ ածուխ, թիեր և այլն, այդ թող ընթերցողը երևակայէ։ Բացի դրանից այս կալուածների վրա ապրող գիւղացիները, Այրում-Դարասիի, Ալխասլի, Ղամըշլուի, Ղազխլարի, Ղօթուրլուի, Ջիչակլուի և այլն շրջանների գիւղերը, ի հարկէ կաշառքով, սատրիկ ձեռներին, ամեն օր շարունակ հարիւրաւոր գերաններ են կտրատում և թափում իրար վրա և սրանց թիերով ու բարակ ճիւղերով իրանց անասուններին կերակրում։ Գերանները փտում են տեղնուտեղը։ Հազարների է հասնում այսպէս փտող գերանների թիւը։ Խտրութիւն չը կայ. ընտիր տեսակի ծառ է կտրւում թէ ո՛չ։

Անցեալ տարի Այրում-Դարասիում միայն մի հարուստ թուրք, որ մօտ 500 գլուխ տաւար ունի, օրական մօտաւորապէս 400 ծառ էր կտրատել տալիս իր տաւարներին կերակրելու համար։ 4—5 ամիս շարունակ կտրատւում էին ծառերը և աւելանում փտող գերանների վրա։

Է՛հ, որը գրեմ և որը ասեմ։

Ջիվանշիրի, Նոր-Բայազէտի գաւառների թուրքերի մէջ աւելի սրտացաւերը կան, քան Ղարաբաղի կօնսիստօրիան է այդ անտառների վերաբերեալ։ Թուրք աչքի ընկնող անհատներից ոմանք ցանկանում էին Էջմիածին գնալ՝ բողոքելու, որպէսզի այժմեան կառավարիչներն ու պահապանները դուրս վռնդւէին այդ անտառներից։ «Եթէ այսպէս գնայ,—ասում էին նրանք,—անտառները կը վերջանան, մինչդեռ մենք այս անտառների յոյսով ենք ապրում այս սարերի և ձորերի մէջ»։

Մենք ցանկանում ենք, որ գիւղացի ժողովուրդը օգտւի այդ անտառներից, բայց չենք ցանկանում, որ նա աւերի, փչացնի մի քանի տարւայ մէջ և վանքի հետ միաժամանակ ինքն էլ ձեռնունայն մնայ։ Նորից կրկնում եմ, որ կալուածները պէտք է հանել Ղարաբաղի թեմի իրաւասութիւնից և յանձնել Երևանի թեմի իրաւասութեանը։ Այստեղ մենք լիայոյս ենք, որ այդ կալուածների կառավարութեան գործը կարգ ու կանոնի տակ կը դրւի, մանաւանդ որ թեմը ներկայումս ունի ընդունակ և ժիր առաջնորդ, որը լաւ ծանօթ է Նոր-Բայազէտի գաւառի բոլոր պայմանների հետ, ուր նա մի քանի տարի վարել է յաջորդութեան պաշտօն։

Եթէ մինչև օրս Խոթայ վանքի կալուածները յանձնւած են եղել Ղարաբաղի թեմի իրաւասութեանը, այդ եղել է միմիայն անհեռատեսութիւնից կամ թիւրիմացութիւնից։

Հարկաւոր է հէնց այժմեանից այդ կալուածների կառավարութիւնը յանձնել Երևանի թեմին։ Հակառակ դէպքում այս պատկառելի կալուածները, որոնք լուսաւորութեան գործին պիտի ծառայեն, սիստեմատիկաբար կոչնչանան և այնուհետև ոչ մի միջոց չի օգնի... Ար. Տ.-Աբր.

Երևան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կովկասի Փոխարքայի փոխարէն, նրա քաղաքացիական մասի օգնականը հաստատեց ի գործադրութիւն Շամախու քաղաքային վարչութեան 1909 թ. դեկտ. 4-ին կայացրած որոշումը՝ տալ Շամախի քաղաքում հայոց հոգևոր վարչութեանը 1100 քառ. սաժէննոց մի հողաբաժին ձրիաբար օգտւելու՝ նրա վրա հայոց սեմինարիա կառուցանելու համար։

◆ Կովկասի Փոխարքան անհրաժեշտ գտաւ, Բագուի նահանգի Կալագայի գիւղական հասարակութեան վրա վարչական ազդեցութիւն անելու նպատակով, զրկել յիշեալ հասարակութեանը 6. ամիս ժամանակով իր միջից տանուտէր ընտրելու իրաւունքից և նշանակել այնտեղ միևնոյն ժամանակով կառավարական տանուտէր երկու պահակներով։

◆ Կովկասի Փոխարքան հարկաւոր համարեց ընդհանուր դատավարութիւնից հանել և յանձնել կովկասեան զինւորական-նահանգական դատարանի քննութեան Սուրամի պրիստաւ Ալերգովի կեանքի դէմ կատարւած մահափորձի գործը։

◆ Թագաւոր Կայսրի հաճութեամբ և թոյլտւութեամբ Բաթումում հաստատւում է բորսա։

◆ Մարտի 10-ին, ցերեկ. ժամը 4-ին, օգտւելով գեղեցիկ եղանակից, Նորին բարձր սրբազնութիւն Վրաստանի էկզարխ Իննոկէնտի արքեպիսկոպոսը կամեցաւ բաց կառքով անցնել ռազմավիրական ճանապարհով՝ մաքուր ու թարմ օդ ծծելու նպատակով։ Բայց հազիւ նա դուրս եկաւ Օլգինսկայա փողոցը, երբ չափաւոր գնալու ժամանակ կառքի ձիերից մինն ընկաւ մայթի վրա և տեղն ու տեղը սատկեց։ Էկզարխը նստեց ուրիշ կառքի մէջ և իր սպասաւորի ուղեկցութեամբ վերադարձաւ տուն։ Այդ դէպքը, «Кавказъ»-ի ասելով, նրա վրա ծանր տպաւորութիւն թողեց։

◆ Երէկ, ցերեկւայ ժամը 4-ին, Տեօմիի թաղում, Եղբ. Միլօֆների մանուֆակտուրային պահեստում տեղի է ունեցել հետևեալ դէպքը։ Պահեստը բերւած մի ինչ-որ արկղը բանալու ժամանակ՝ յանկարծ սարսափելի պայթիւն է առաջանում։ Բանից դուրս է գալիս, որ արկղի մէջ դրւած է եղել դժոխային մեքենայ։ Արկղը բացող ծառայողը տեղնուտեղը սպանւում է։ Պայթիւնից առաջանում է հրդեհ, սակայն շուտափոյթ վրա հասնող հրդեհաշէջների խումբը հանգցնում է կրակը։ Այնուամենայնիւ՝ հրդեհը բաւականաչափ նիւթական վնաս է պատճառել։

◆ Այսօր Կովկասեան Բժշկական Ընկերութեան շինութեան մէջ (Ալէքսանդրեան այգուն կից) երեխաների համար տ. Կումսիեվան ռուսերէն կը կարդայ մի դասախօսութիւն՝ ցերեկւայ ժամը 4—5-ը «Ինչպէս են պատրաստում թուղթը»։ Վաղը, կիրակի, տ. Վարդանեանը միևնոյն տեղում հայերէն առ. ժ. 10—11-ը կը կարդայ «Քայքայւած բոյնը», տ. Ավալիանին վրացերէն՝ առ. ժ. 11—$11^1/_2$-ը կը պատմէ «Թօմայի արկածի մասին»։ Հասակաւորների համար բժ. Ն. Խատիսեան կը դասախօսէ մարդու կազմուածքի մասին՝ երեկ. ժ. 6—7-ը։

◆ Մարտի 9-ին Կովկասի Փոխարքայի պալատում պաշտօնական անձանց ներկայութեամբ գնդապետ Պեվնեւը մի ռեֆերատ կարդաց օֆիցերի սօցիալական դերի մասին։

◆ «Новое Время»-ի վերջին համարներից մէկում մի թղթակցութիւն երևաց Թիֆլիսից, որի մէջ, ի միջի այլոց, հաղորդւում է, որ Թիֆլիսի ժուռնալիստների ընկերութեան ժողովում պարզւեց, որ քաղաքային դումայի ձայնաւոր Ջրելեւը նոյնպէս մասնակից է լրագրական—էլեքտրաքարշի Պանամային։ Այդ թղթակցութեան առիթով Թիֆլիսի նահանգապետը Ջրելեւի վերաբերմամբ բացատրութիւն է պահանջել քաղաքային վարչութիւնից։ («Т. Л.»)

◆ Էջմիածնի սինօդը Փոխարքայի դիւանատան հասցէով ուղարկել է 66 ր. 25 կ., որ գոյացել է հայոց եկեղեցիներում կախած գանձանակներից յօգուտ պատերազմում ընկածների այրիներին և զաւակներին խնամող ընկերութեան։

◆ Թիֆլիսի նահանգապետը հաստատեց քաղաքային դումայի այն որոշումը, որի համաձայն քաղաքային մի հողաբաժին է յատկացւում մահմեդականների օրիորդաց դպրոց հիմնելու համար։

◆ Անցեալ տարւայ գործունէութիւնից յետոյ Թիֆլիսի քաղաքային լօմբարդը զուտ եկամուտ է ունեցել 18,838 րուբլի, որի մի մասը տրւելու է ծառայողներին պարգև։

◆ Թիֆլիսի պօստ-հեռագրական գրասենեակի համար ներկայումս նոր յարմար շինութիւն է որոնւում Գօլօվինսկի պրօսպէկտի վրա։ Սկիզբներում հաղորդւած այն լուրը, իբր մտադրւում է այդ հաստատութեան մի մասը փոխադրել Միքայէլեան փողոցը, սխալ երևաց։

◆ Լրագրական տեղեկութիւնների համաձայն, արդարադատութեան մինիստրի կողմից մօտիկ ապագայում յատուկ պաշտօնեայ է գալու քննելու Կովկասի դատաստանական շրջանի գործերը։

◆ Վերադարձաւ Պետերբուրգից պետական բանկի Թիֆլիսի գրասենեակի կառավարիչ Բէզօբրազովը։

◆ Գանձակի քաղաքագլխի պաշտօնի համար թուրքերը առաջ են մղում „Каспій“ թերթի նախկին խմբագիր՝ I Պետական Դումայի անդամ Թօփչիբաշեվին։

◆ Զաքաթալայի շերամապահական փորձնական կայարանը անցնում է հողային բարեկարգութեան և երկրագործութեան գլխաւոր վարչութեան տնօրէնութեան ներքոյ։

◆ Սուրախանում Բենկէնդորֆ ֆիրման նաւթ է ստացել ներկայ տարւայ յունվար ամսին 2.556,947 փութ և փետրվարին՝ 1.062,892 փութ։

◆ Փառակա գիւղից (Գողթան գաւառ) մեզ գրում են. «Մարտի 6-ին պատահեց այստեղ հետևեալ դէպքը։ Տեղացի Առաքել Գրիգորեանը դաշտից ձիով վերադառնալիս, համագիւղացիներ Ներսէս Մելքումեանը և սրա եղբօրորդի Վասիլ Մելքումեանը գիւղից ոչ շատ հեռու տարածութեան վրա յարձակւում են նրա վրա, խլում ձին և սաստիկ կերպով ծեծում Գրիգորեանին։ Վերջինս մի կերպ ազատւելով՝ գալիս է գիւղը և յայտնում իր հետ պատահածի մասին։ Գիւղացիները մի կերպ կարողանում են Մելքումեաններից յետ առնել ձին և յանձնել Գրիգորեանին»։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Հինգշաբթի, մարտի 11-ին, Հայոց Դրամատիկական Ընկ. Թատերասէրների խումբը Զուբալովի անուան ժողովրդական տանը ներկայացրեց Վ. Փափազեանի «Ժայռ» 4 գործ. դրաման։ Ներկայացումը խաղի կողմից ընդհանրապէս անցաւ շատ աջող։ Հասարակութիւնը խիստ ոգևորւած շատ անգամ բուռն էր հրաւիրում դերակատարներից շատերին և երկու անգամ՝ հեղինակին։ Պիէսը իր բովանդակութեամբ հաւանութիւն գտաւ հանդիսատեսներից, թէպէտ բեմականութեան և մանաւանդ լեզուի կողմից կարօտ է մշակման։ Թատրոնը լիքն էր։ Միջարարներին նուագում էր սիրողներից կազմւած երաժիշտների խումբը։ Հետևեալ ներկայացումը տեղի կունենայ Արքունական թատրոնում ամսիս 18-ին, ժողովրդական մատչելի գներով, դերասան Սևումեանի բենեֆիսին։

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

◆ Այսօր Թիֆլիսի հասարակական կլուբի հերթական երեկոն նուիրւած կը լինի հանգուցեալ Վէրա Կոմիսսարժեվսկայայի յիշատակին։ Վերջում կը խաղացւի Ստրինդբերգի «Հայր» դրաման։

◆ Թիֆլիսի հասարակութիւնը առիթ կունենայ հանդիսատես լինելու մի օրիգինալ համերգի։ Թիֆլիս են եկել Թիւրքահայ 3 լարանուագներ՝ յայտնի երգչուհի Մելէկ-Հանըմի հետ միասին, որոնք Արտիստական թատրոնի դահլիճում՝ կիրակի օրը, մարտի 14-ին, կը տան արևելեան համերգ։ Մելէկ-Հանըմը գահընկէց սուլթանի հարեմի երգչուհիներիցն է։ Նա կերգէ թիւրքական ռոմանսներ և պարսկական երգեր։

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Г. Халатянцъ. Очеркъ Исторіи Арменіи. Москва 1910 г. Գինն է 3 րուբլի։

Մեր առաջն է դրւած պրօֆէսօր Գրիգոր Խալաթեանի «Հայաստանի պատմութեան» առաջին հատորը։

Աւելի քան ժամանակին է լոյս տեսնում այդ գեղեցիկ և կարևոր աշխատութիւնը։

Նա կազմւել է այն դասախօսութիւններից, որ հեղինակը, իբրև դասատու, կարդացել է ամբիոնից ուսանողներին։

Առաջին այդ հատորը, որ բովանդակում է իր մէջ Հայաստանի պատմութեան վերաբերեալ հանգամանքները մինչև քրիստոնէութեան ընդունելութիւնը Հայաստանում, կոչւած է «Հին պատմութիւն»։ Նա բաղկացած է մեծադիր 360 երեսներից, բաժանւած 15 գլուխների։

Գ. Խալաթեանի պատմութիւնը գալիս է բաւարարութիւն տալու մի մեծ պահանջի, որ զգացւում էր գրականութեան մէջ թէ իբրև ընթերցանութեան գիրք և թէ իբրև ձեռնարկ։

Այդ պատմութիւնը արդիւնք է եւրոպական գիտութեան լուսաբանած պատմական փաստերի, վկայութիւնների, տեղեկութիւնների և ենթադրութիւնների, որոնք մինչև այժմ դեռ կատարելապէս չէին զուգախառնւած մի պատմական ամբողջութիւն կազմելու համար և որոնք սակայն տալիս են ցուցումներ այդպիսի մի փորձ անելու համար։

Եւ Գ. Խալաթեանը իր ներկայ երկասիրութեամբ աշխատում է ներկայացնել մի ամփոփ տեսութիւն այն պատմական անցեալի, որ պէտք է ներկայացնի Հայաստանի հին պատմութիւնը։

Ներկայ աշխատութիւնը ոչ մի նմանութիւն չունի այն «Հայոց պատմութեան» հետ, որը դասաւանդւում է մեր դպրոցներում և որը այս ու այն փոփոխութիւններով հանդիսանում է իբրև հետևողութիւն Մովսէս Խորենացու։ Այստեղ չը կան Հայկի, Արամի, Արայի, Անուշաւանի, Պարոյրի մասին աւանդական հաղորդագրութիւնները։ Պատմութիւնը մշակւած է այն նիւթերի հիման վրա, որ մատակարարում են հին ասորական, բաբելական, յունական, հռոմէական տարեգրութիւնները և եւրոպական գիտնականների կատարած նորագոյն ուսումնասիրութիւնները։

Դժբաղդաբար պէտք է խոստովանել, որ Առաջաւոր Ասիայի պատմութեան համար դեռ պակասում են շատ և շատ նիւթեր և անհնարին է վերստեղծել անցած-գնացած դարերի իրականութեան պատկերը բաւարար չափով։

Գ. Խալաթեանի աշխատութիւնը, որ ջանացել է միատեղ հաւաքելով եղած նիւթերը կազմել ամբողջութիւն, ինքնըստինքեան զգացւում էր իբրև ժամանակակից մի պահանջ հրապարակի վրա։ Եւ ամփոփման այդ փորձը բացում է հետաքրքրութեան համար շատ ուշագրաւ կողմեր այն խորը առեղծւածի մէջ, որը ծածկւած է Հայաստանի հին պատմութեան անուան տակ։

Եւ Հայաստանի պատմութիւնն ուսումնասիրողի համար պարզւում են նոր հարցասիրութեան կէտեր։

Արդարև ի՞նչ է Հայաստանը և ո՞ւր է նա։ Պատմական տարեգրութիւնները ցոյց են տալիս, որ Հայաստանը հին օրերում գտնւած է եղել ոչ այն տեղերում, ուր յետոյ նա դարձել է յայտնի և յիշատակւել է մեր պատմագիրների գրւածքներում։

Նոյնպէս՝ ինչ ազգ են հայերը և որտեղից են առաջ եկել։ Բազմաթիւ ցուցումներ, թէև կցկտուր և դեռ ոչ բոլորովին մշակւած, լուսաբանում են, որ հայերը կազմւած են մի քանի ազգագրական տարրերից, որոնք դարերի ընթացքում գործել են այն երկրում, որ յետոյ դարձել է հայերի հայրենիքը։

Անշուշտ, միայն այն ժամանակ, երբ Առաջաւոր Ասիայում կը բացւեն ուսումնասիրութեան համար մատչելի կարևոր այնպիսի գիտնական աղբիւրներ, ինչպէս էին ասորական և բաբելական գրադարանները իրանց շրջանների համար, և երբ արձանագրութիւնների ճշգրիտ ընթերցումները կը բացայայտեն մութ մնացած կէտերը, այն ժամանակ հնարաւոր կը լինի տալ Հայաստանի բաւարար պատմութիւնը։

Սակայն իւրաքանչիւր ժամանակի մարդիկ ցանկութիւն ունեն գիտենալ՝ թէ եղած ուսումնասիրութիւնները ինչպէս են պարզում անցեալի պատկերը։

Եւ ահա մեր առաջ դրւած պատմական ամփոփումը մի հետաքրքրական փորձ է տալիս ընթերցող հասարակութեանը և ուսումնասէր երիտասարդութեանը՝ վերարտադրելու Հայաստանի պատմութիւնը եղած ուսումնասիրութիւնների հիման վրա։

Գ. Խալաթեանի աշխատութիւնը գրւած է հակիրճ ոճով, սեղմ բովանդակութեամբ։ Եւ այնուամենայնիւ նա դուրս է եկել բաւական ստուար մի աշխատութիւն։ Անտարակոյս, աւելի մանրամասնօրէն հետաքրքրւողները պէտք է դիմեն յատուկ գրականութեան այս ու այն խնդրի պարզաբանութեան համար։

Ողջունում ենք Գ. Խալաթեանի աշխատութիւնը և հաւատացած ենք, որ Հայաստանի պատմութեան նորագոյն խմբագրութեան ներկայ փորձը կը մօտեցնէ մեզ այն իրական անցեալի գիտակցութեան, որը մինչև այժմ մնացել է մութ և անորոշ մեզ համար։

Ա. Քալանթար

Շ. ԿՈՒՐՂԻՆԵԱՆԻ «ԵՐԱԶԸ»

Ալ. Մեանիկեանը «Մշակի» այս տարւայ № 26-ի մէջ իր պաշտպանութեան տակ է առնում Շ. Կուրղինեանին Credo-ի յարձակումներից յետոյ (Մշակ, №№ 240, 241, 1909 թւին)։ Credo-ն մեղադրում է Շ. Կուրղինեանին հայրենասիրական, նացիոնալիստական զգացմունքներով տարւած լինելու մէջ։

Ալ. Մեանիկեանը պնդում է, թէ Շ. Կուրղինեանի ոչ-պրօլետարական տատանումները «ժամանակագրական կարգով, առաջին ստեղծագործութիւններից են», և թէ ժամանակի ընթացքում «պօէտը իր հին նուագները միանգամայն աչքաթող է անում և դառնում նոր երգերի, նոր պաշտամունքի. այդ ներքին переломъ-ը շատ պարզ կերպով նկատելի է այս դէպքում միջանցական օղակ կազմող «Երազ» (էջ 22) ոտանաւորից... Այդ բանաստեղծութեամբ Կուրղինեան, թողած ազգայինը, դառնում է միջազգայինին. երգչուհին ուզում է երկրնքից կախված ջահը ցած առնել իր վաթանի համար, բայց դա չէ աջողվում նրան, որովհետև «կախված էր նա ամենքի համար» (ընդգծումը մերն է)։ Սա պարզօրէն ցոյց է տալիս, որ բանաստեղծուհին մէկընդմիշտ թեակոխում է պրոլետարական աշխարհը»։

Յօդուածագիրը սխալ է հասկացել «Երազ» ոտանաւորը։ Դրա մէջ հեղինակի աշխարհահայեացքի переломъ չը կայ բոլորովին։ «Երազի» մէջ է, որ ամենացայտուն կերպով արտայայտվել է Շ. Կուրղինեանի ծայրայեղ հայրենասիրութիւնը։

Ահա այդ ոտանաւորը ամբողջովին.

Երազ ես տեսայ—երկնակամարից
Շքեղ, բոցավառ մի ջահ էր կախված.
Ճօճում էր նրան զով քամին վարից,
Անհաս թևերով բոցերը գրկած։
Ա՜խ, լաւ էր այնպէս... Եւ բոսոր լոյսին
Երկիրն էր նայում ակնապիշ, լուրկ.
Ինչպէս սիրահար՝ որ մատաղ կոյսին
Միայն տեսնելուց գոհ է, երջանիկ։
Թռայ սրարշաւ հեռհև ես վեր,
Վաթա՛ն, քեզ համար... որ լոյսը միայն
Խաւար քո դէմքին մօտ-մօտիկ կախէր,
Քեզ լոյս տար, ազի՛զ, շողար յաւիտեան։
Ահա մօտեցայ ես նրան անշեզ.
Ջահը պինդ գրկած սլացայ դէպ վար.
Բայց նա մարեցա՜ւ... խաւա՜ր է անհեղ...
Ա՜խ, կախված էր նա ամենքի համար։

Որքան կուրօրէն պէտք է սիրէ մէկը իր հայրենիքը, որ՝ բոլորովին չը մտածելով ուրիշների մասին՝ ցանկայ իր հայրենիքը միայն լուսաւորված տեսնել։ Լրացնենք հեղինակի խօսքերը. «Ի հարկէ, եթէ այդ լոյսը ամենքի համար կախված չը լինէր, այլ ստեղծված լինէր միայն իմ հայրենիքի համար, երբ ես նրան վայր բերէի բարձունքներից, նա չէր հանգչի և այժմ իմ հայրենիքը լուսաւորված կը լինէր»։ «Երազի» մէջ ես տեսնում եմ արտայայտված տարամերժ մի միտք միայն, և ո՛չ «переломъ»։

Եւ այսպիսի անպատեհութիւններ քիչ չեն Շ. Կուրղինեանի «Արշալոյսի ղօղանջների» մէջ։

Հաթ

ՄԱՄՈՒԼ

«Մշակի» № 41-ի «Մատենագրութեան» բաժնում մենք յիշատակել էինք, որ Պետերբուրգում հրատարակվող „Жизнь на Кавказѣ" շաբաթաթերթը իր № 3-ում մի առաջնորդող յօդուած է նուիրել ազգային հարցին Կովկասում։ Այդ յօդուածի հեղինակը՝ Ա. Կոտելնիկօվ այն կարծիքն է յայտնում, որ ազգային անկախութեան ախոյեաններ հանդիսանում են հպատակ ազգերի մէջ ոչ թէ բարձր դասերը, այլ ժողովրդական մասսաները և նրանց մօտիկ կանգնած ինտելիգենցիան։ Ինտելիգենցիայի բարձր խաւերը աւելի հեշտ և արագ կորցնում են իրանց ազգային բնաւորութիւնը, շատ շուտով ձուլվում են, դիմազուրկ են լինում և ստանում միջազգային գծեր։ Բայց ժողովրդական մասսան և նրան մօտ կանգնած ինտելիգենցիան խօսում են իրանց մայրենի լեզուով, սովորում են մայրենի դպրոցներում, յարգում են իրանց եկեղեցին, կարդում են մայրենի լեզուով գրքեր։

Ապա հեղինակը շօշափում է այն հարցը, թէ արժէ՞ արդեօք պահպանել առանձին ազգութիւնների կուլտուրական առանձին յատկութիւնները, թէ այդ ձգտումը հակասում է մարդկութեան շահերին, որոնք պահանջում են, որ բոլոր ազգութիւնները ձուլվեն ի մի ընտանիք, խօսեն մի լեզուով և աղօթեն մի Աստուծու, ապրեն նոյն իդէալներով, ճաշակներով և ձգտումներով։

Եւ նա հաստատում է, որ ազգութիւնների այդ տեսակ ձուլումը ոչ հնարաւոր է և ոչ էլ ցանկալի, ու գալիս է այն եզրակացութեան, որ տիրապետող պետութիւնը կամ ազգութիւնը, եթէ կամենում է՝ որ ազգագրական կողմից խայտաճամուկ ազգաբնակութիւն ունեցող մի հպատակ երկիր խաղաղ գոյութիւն և զարգացում ունենայ, չը պէտք է արգելք լինի ազգայնական զարգացման իրաւունքին փոքրաթիւ ազգութիւնների համար։ Ճանաչել բոլոր ազգութիւնների համար կուլտուրական զարգացման և ինքնորոշման իրաւունք—ահա մի քանի ազգութիւնների խաղաղ կենակցութեան հիմը։

Եւ հաւատ տածելով Կովկասի այժմեան Փոխարքայ Վօրօնցօվ-Դաշկօվի ցանկութեան անկեղծութեան մասին՝ հաստատել անդորրութիւն Կովկասում և աջակցել երկրի կուլտուրական, առևտրական և արդիւնաբերական զարգացման, հեղինակը յոյս է յայտնում, որ երկրի բոլոր մանր ազգութիւնները պէտք է աջակցեն Փոխարքային նրա այդ ձգտման մէջ։ Եւ աւարտում է յօդուածը հետևեալ խօսքերով.

«Երկրի կուլտուրական զարգացման գաղափարը պէտք է հարթէ ազգայնական տարաձայնութիւնների սուր անկիւնները, եթէ կան այդպիսիները, մօտեցնէ և միացնէ Կովկասի բոլոր բնակիչներին, առանց ազգութեան, կրօնի, ծագման և սօցիալական դրութեան խտրութեան»։

Մենք միայն ձայնակցել կարող ենք շաբաթաթերթին, որ իրան նպատակ է դրել ծառայել ազգութիւնների մերձեցման այդ գաղափարին, մանաւանդ որ մեր լրագիրը ահա գրեթէ 40 տարի է, որ քարոզում է այդ գաղափարը։

*

«Հայրենիք» (Կ. Պօլսի) թերթը ընդգծում է այն երևոյթը, որ մեր յեղափոխական գործիչները ամենևին հետեւողական չը մնացին յորմէհետէ վերադարձան արտասահմանից երկիր։ Եւ երբ այդ մասին խօսվել է Դուրեան սրբազանի հետ, նա ասել է. «Այն ատեն անշուշտ իրենց գործին այնպէս կուգար, հիմա ալ այսպէս»։

Ահա ինչպէս է խօսում թերթը.

Վեր առէք ռևէ դաշնակցական, ռևէ հնչակեան, որ այսօր ազգային երեսփոխան է, և կը տեսնէք, որ ատոնք բոլորն ալ հետեւական ըլլալու, իրենք իրենց անցեալին հետ համաձայն մնալու ճիգ մը ու ջանք մը չեն ըներ քաղաքական վարմունքնուն մէջ։ Ասոնք ամենն ալ խորշեցան մէկուս. ժողովին առջև Ադանայի կոտորածը հանելէ, ընդդիմանան որ ազգ. երեսփ. ժողովը յիշատակագրով մը զայն հօն տանի։ Միշտ միևնոյն փաստով։ Որպէս թէ այդպիսի դիմում մը կրնար նոր կոտորածներ պատճառել. մինչդեռ, Համիդի օրով, այդ փաստը զիրենք չէր արգիլեր օտար պետութեանց դիմելէ։ Ո՞ր ատեն աւելի քաղաքական իմացողութիւն ունէին։ Ո՞ր ատեն աւելի պարզամիտ էին, կամ աւելի խելացի էին. այն ատեն թէ՞ հիմա։

Տ. Մաղաքիա Օրմանեանի դէմ յարուցուած ամբաստանութիւններէն մէկն այն է թէ՝ այս եկեղեցականը, պատրիարք եղած պահուն, Լահէյի վեհաժողովին հեռագիր մը քաշելով բսած է, թէ Մ. Զեբաղ հայոց ազգին կողմէ խօսելու և բողոքելու յատկութիւն չունի։ Դաշնակցականները, որ այսօր Կիլիկիոյ կոտորածին խնդիրը յաջողեցան թաղել թէ մէբուսական ժողովին և թէ ազգ. երեսփ. ժողովին մէջ, ամենէն կատաղի թշնամիներն են հիմա Օրմանեանին, այդ հեռագրին պատճառով։ Այս վերջինն հիմա իրաւունք պիտի ունենայ ըսելու.

— Դուք որ այսօր սուլթան Համիդի մը միահեծան, ամենակարող, ամենազօր, բռնաւոր և գազանային իշխանութեան ներքև չզտնուելով հանդերձ՝ Ադանայի աղէտին վրայ իբր օսմ. մէբուս և իբր հայ երեսփոխան կը մերժէք խօսիլ, և այդ ձեր լռութիւնը կարդարացնէք ըսելով, որ խօսք մը, բառ մը կրնայ նոր գրգռում մը, նոր գայրոյթ մը ծնեցնել և այս գրգռումն ալ նոր կոտորած մը յառաջ բերել, ինչո՞ւ հիմա կատաղի աչուըներ վրաս դարձնելով զիս դաւաճան կանուանէք այդ հեռագրին համար, որուն յղմամբ իմ առաջադրածս ուրիշ բան չէր, բայց եթէ գազանին մոլեգնութիւնը մեղմել և ազգը փրկել անոր վրիժառու ոգւոյն նոր հարուածներէն։

Ըստ մեզ, Օրմանեան, որ մինչև վերջերս զուրկ էր այս հզօր զէնքէն, հիմա ունի այս զէնքը, զոր պիտի գործածէ ընտելացած, ստրկացած, համակերպութեան աստիճանը ընկած գործիչներուն դէմ։ Այս վերջիններն այլ ևս յոխորտ ճակատ մը թող չունկեն Օրմանեանի դէմ։ Աներեսութիւն պիտի ըլլար։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կողբ, 5 մարտի

Ղալաչա գիւղից Մելքիսեդէկ քահանան «Մշակի» 26-դ, 30-դ և 40-դ համարներում, գաւառական տեղեկութիւնների բաժնում հաղորդում է իմ իբր զեղծումների մասին։ Նախ՝ իբր թէ ես զուր տեղ խոզարածներից (իմս՝ իր խոզարածներից) ստացել եմ 110 ր., երկրորդ՝ թէ ես շահագործում և հաբստահարում եմ ժողովրդին և նրանից պսակագրամներ աւելի ստանալով պակաս ներկայացնում ուր հարկն է, երրորդ՝ թէ իբր կատարածս զեղծումների մասին շուտով բողոք է ներկայացվելու հոգ. իշխանութեանը։

Որպէսզի իրերի դրութեան վրա հասարակութիւնը թիւր կարծիք չը կազմէ, սրանով յայտնում եմ նախ՝ թէ յիշեալ քահանայի խոզարածների դէպքի մասին ես ոչ մի մասնակցութիւն չեմ ունեցել։ Մելքիսեդէկ քահանայի խոզարածները յարձակում գործելով իմ և Բարանիլի Բ. Ամիրաղեանցի խոզարածների վրա և հրացաններ արձակելով 5 խոզ են անհետացնում։ Ապա իրանք իսկ զգալով իրանց արարմունքի՝ վատ հետևանքը՝ ներողութիւն խնդրելով վճարել են կորած խոզերի գինը։ Ես ոչ ստրաժնիկների եմ դիմել և ոչ մարմնաւոր իշխանութեանը, իսկ եթէ ն. Մելքիսեդէկը իմ այդ ներողամիտ վարմունքից դժգոհ է մնացել, այժմ ես ինձ թոյլ կը տամ դիմել ուր հարկն է՝ խնդրելու երևան հանել զուտ ճշմարտութիւնը և պատժել յանցաւորին։ Ահա այդ դէպքից վիրաւորված, որ տեղի է ունեցել 5 ամիս առաջ, Մելքիսեդէկ քահանան իմ պաշտօնավարութիւնս շօշափելով՝ ինձ զեղծարար է հրատարակում։ Որ ես ոչ մի զեղծում չեմ կատարել, որ ես միշտ իմ պաշտօնս կատարել եմ բարեխղճաբար՝ ի նկատի ունենալով թէ ժողովրդի և թէ Մայր Աթոռի շահերը, այդ ցոյց կը տան կօնսիստօրիայի դիւանական գործերը և այն քննութիւնը, որ երևան կը հանէ իրողութիւնն իր իսկութեան մէջ։ Ես միշտ եղել եմ կօրէկտ դէպի ժողովուրդը և դէպի իմ հոգ. իշխանութիւնը և յոյս ունեմ, որ վերջինս կը պարզէ ամեն ինչ և ապա իւրաքանչիւրին իր արժանաւոր հատուցումը կը տայ։

Գործակալ Ղազախի Բ. մասի՝
Մարտ. ք. Տէր-Յարութիւնեան

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՆՃՌՈՏ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ստ. Մալխասեանցը շնորհակալութեան արժանի է, որ «վ»-ի խնդիրը հանդէս է հանել։ Տարիներ շարունակ դպրոցը խեղդվում է «ւ»-ի շահատակութիւններից։ Այժմ Մալխասեանցն ուզում է, ինչպէս ռուսն ասում է, սեպով սեպը դուրս քշել։ Դուք գրում էք «սուէր», «նուէր», «Աստուած», «խօսւում», ես կը գրեմ «լավ», «ավաղ», «անիվ», «սավուռ»... ակն ընդ ական...

Չը նայելով այսպիսով ծայրայեղութեան, կասկած չը կայ, որ Մալխասեանցը լաւ պաշտպան է հանդէս գալիս ընդդէմ էժանագին դիլէտանտութեան։ Այնուամենայնիւ մենք կուզենայինք, որ դպրոցի կրած աղէտը աւելի ևս չը բարդվի։ Եւ անշուշտ չի բարդվի, եթէ բարձր պահենք այն սկզբունքը, թէ ուղղագրութեան պայքարը պէտք է նախ դպրոցից դուրս կատարվի գրականութեան մէջ, և ապա թէ ստացած արդիւնքը դպրոցում պարտաւորիչ դառնայ. թէ այդ վտանգաւոր զալլաքութիւնը ուսուցիչների քմահաճութեամբ չը պէտք է փորձվի աշակերտների գլխին, մինչև որ ինքը կեանքը որոշ վճիռ չէ դրել, որպէսզի այնուհետև դպրոցն էլ անվրդով հպատակվի այդ վճռին։ Կան ռէֆօրմներ, որ կեանքը պէտք է հասունացնէ, և ոչ թէ հատ հատ դպրոցներում նրանք անժամանակ և անպատրաստ գլուխ բարձրացնեն։

Արդէն մի քառորդ դար է անցել այն օրից, երբ որ դպրոցը ոգևորվեց իր խելքով «յիւն» թագաւորութիւնը հաստատել կեանքի մէջ, բայց միայն այսօր խելքի է գալիս նա, զգալով իր սխալ ուղղութիւնը։ Միթէ Մալխասեանցն ու Տէր-Ղևոնդեանը չե՞ն ուզենայ ընդ առաջ գնալ այսպիսի խելամտութեան։ Եթէ նրանք շտապով կը փորձեն դասագրքերի մէջ այժմէն իսկ տպագրել «ավազակ», «Ավետիք», «հիվանդ», և այլն, նրանք մի երկրորդ անգամ կը նահատակեն դպրոցը, և յօնքը շինելու տեղ՝ աչքը կը հանեն։

Մենք չենք ասում, որ Մալխասեանցը հանդէսից դուրս գայ և ետ վերցնի իր կոչը։ Ոչ, alea jacta est, վիճակը գցվել է, այլևս անհնարին է նահանջը. պէտք է վէրք տալ և վէրք ստանալ, մինչև որ երկու գրերից մէկը յաղթէ միւսին։ Սակայն այդ պայքարի ասպարէզը պէտք է լինի գրականութիւնը և ոչ թէ դպրոցը։

Մենք ուրեմն ունենք երկու խնդիր ուղղագրութեան նկատմամբ—տեսական-գրականական, գործնական-դպրոցական։ Եւ այդ խնդիրներից իւրաքանչիւրի լուծումը պէտք է իր յատուկ կարգով և անկախ կերպով կատարվի։ Արդեօք Մեսրոպը միաժամանակ հնարել է «վ»-ը և «ւ»-ը թէ՞ միայն մէկը և ո՞րը յատկապէս. այս հարցը ուսումնական կամ տեսական խնդիր է, և դրա վճռով մեր դպրոցի տառապանքը բնաւ չի փարատվի։ Պատմական բարեփոխութեան պատճառներով, դպրոցը այսօր կարող է գործածել առաւելապէս «ւ»-ը կամ առաւելապէս «վ»-ը առանց ի հաշիւ առնելու, թէ արդեօք այդ երկու գրերից ո՞րն առաջ մուտք է ստացել մեր այբուբենի մէջ։ Այս խօսքերից հետևում է, որ մինչև որ գրականութիւնը տեսականապէս իր խնդիրը ծեծէ, որ շատ երկար կարող է տևել, դպրոցը պէտք է օր առաջ գործնականապէս իր գլխի ճարը տեսնէ։

Դպրոցական խնդրի լուծումը այլ պէտք է լինի, քան գրականականինը։ Մինչև այսօր դպրոցում թագաւորել է անիշխա. ուսուցիչներից ոմանք ըստ քմահաճոյս «ւ»-ը են գործածել, ոմանք՝ «վ»-ը։ Օրվայ կարիքը պահանջում է, որ դպրոցում անիշխանականութիւնը սանձվի և ջախջախվի։ Այդ բանը կարող էր «Նոր-Դպրոցը» մեղմութեամբ և քաղցրութեամբ կատարել, բայց նա, ինքն իրան հակառակելով, շտապով «ւ»-ի կողմը հակեց, որով կորցրեց հասարակութեան հաւատքը դէպի ինքը, որ խիստ ցանկալի պիտի լինէր իր՝ համար։ Ազգի բարերարները (?) այժմ փորձում են «Հրատարակչական Ընկերութեան» ձեռքով էլ վաւերացնել «ւ»-ի գործածութիւնը։ Այսպիսի տարալայման խառնաշփոթութեան մէջ մնում է, որ «Ուսումնական խորհուրդը» մի ձեռնհաս ժողով կարգէ այդ խնդրի քննութեան համար անյապաղ (մինչև սեպտեմբեր ամիսը) և ապա բարձրագոյն հոգևոր վարչութեան իշխանական հրաման հայցէ, որ այնուհետև բոլոր հայոց հոգևոր ուսումնարաններում անխտիր գործածվի կամ «ւ»-ը, կամ «վ»-ը, կամ «ու»-ն և կամ դրանից իւրաքանչիւրը իր սահմանում։ Բաւական է, որքան խաղեր խաղացինք։

Ես այստեղ իմ ասելիքս վերջացած պիտի համարէի, բայց մի երկու կարևոր հանգամանքներ կան յիշատակելու։

Ինչո՞ւ ենք բարդում խնդիրը և առանց այլևայլութեան չենք ուզում ընդհանրացնել «ւ»-ի գործածութիւնը, քանի որ մեր ռուսահայ հեղինակները, նոյնիսկ ուսուցիչներն էլ, արդէն սիրել են այդ նշանախեցը և այդպիսի գրութեան վարժվել են։ Ռուսահայոց հոգեբանութիւնն այդ ուղղութեամբ է ընթացել, և թւում է, թէ պատճառ չը կայ այդ բանին ընդդիմանալու։ Թող ուրեմն իշխանաւոր վարչութիւնը վաւերացնէ այդ չարաբաստիկ «ւ»-ը, և ես առաջինը հէնց վաղը իմ բոլոր դասագրքերը անտրտունջ կը ճոխացնեմ «ւ»-երով։ Բայց այդպիսի քայլն անելու համար՝ հոգևոր վարչութիւնը պէտք է յանձն առնէ երկու զոհաբերութիւն։ Մին՝ որ մեր եկեղեցական գրքերն արդէն աւանդական այբուբէն ունեն. արդ, դպրոցում միթէ պէտք է նո՞ր այբուբէն կիրարվի։ Երկրորդ՝ մենք ամեն միջոցներ գործ ենք դնում, որ գրականապէս միանանք թիւրքահայերի հետ, որպէսզի օր առաջ մի բարբառով աշխարհաբար աւետարան ունենանք. իսկ այժմ ուղղագրութեան խծբծներով խոր խտիր պիտի դնենք մեր և նրանց միջև։

Անշուշտ հոգևոր վարչութիւնը այս կէտերը անուշադրութեան չի մատնի։

Ոմանք ասում են, թէ «ւ»-ը պէտք է ընդհանրացնել, որովհետև աւելի կարճ է գրվում, ուրեմն հեշտ է գրվում։ Այո, հեշտ է գրվում, բայց արդեօք հեշտ է կարդացվում։ Զարմանալի է, որ մեր ուսուցիչներից ոչ ոք մինչև այսօր այդ բանը չը նկատեց, թէ արդեօք հեշտ է կարդացվում փոքրիկ «յիւն» նշանախեցը։ Այս ապացոյց է, թէ նրանք որքան մտադրութեամբ (?) են հետևում իրանց սանիկների ընթերցանութեան սխալներին։ Մարդիկ շատ հեշտ են սովորում սղագրութեամբ գրելը, բայց նրանք հէնց իրանց ձեռքով գրածը առաջին ամիսներում չեն կարողանում հեշտութեամբ կարդալ։ Կարդալու ժամանակ ամեն մի գծի չափը, ձիրքը, յարաբերութիւնը մեծ նշանակութիւն է ստանում արագ ջոկելու համար։ Աշակերտի աչքը որն աւելի շուտ կը ջոկէ այս երկու կերպ գրութիւններից—արդեօք «ասւում է», «խօսւում է», թէ «ասվում է», «խօսվում է»։ Թող աշակերտները մի երկու երես «Արօրից» կարդան և մի երկու երես էլ Աղայեանի գրքերից, և դուք փորձով կը համոզվէք, թէ ինչպէս նրանք շուտ-շուտ կուլ են տալիս ւ-երը, իսկ վ-երը միշտ իրանց տեղերում անսխալ ճանաչում են. Նրանք փոխանակ արտասանելու «ասւում», «խօսւում» կը կարդան «ասում», «խօսում», չը նկատելով միջի ւ-երը։ Ուրեմն վ-ը անժխտելի առաւելութիւն ունի նշանախեց ւ-ի դէմ հէնց մանկավարժական տեսակէտից։

Ինչո՞ւ ւ-ը կորչում է ընթերցանութեան ժամանակ. որովհետև աչքը իսկոյն չէ ջոկում այդ փոքրիկ գիծը։ Եւրոպացիք այդպիսի գծիկի վրա մի կէտ են դնում, որպէսզի կարդալու ժամանակ այն շուտ ջոկվի։ Նրանց i գիրը գրեթէ մեր ւ-ը է, բայց վերադիր մակակէտով։ Թէև ֆրանսիացին մանրակրկիտ բան է համարում այդ կէտերը և միշտ ծաղրում է այս խօսքով՝ Mettre les points sur les i, բայց գրքերում միշտ խնամով տպագրում է i տառերը իրանց մակակէտերով։ Արդեօք մերոնք ևս չե՞ն կամենայ մեր ւ-երի գլխին մի-մի մակակէտ բազմեցնել, որպէսզի նրանց ընդհանրացումը աւելի ևս աջողեցնեն!!

Մենք չը պէտք է զարմանանք, որ մեր այբուբենի մէջ ունենք երկու լծորդ նշանագրեր՝ ւ և վ։ Նոյնը պատահում է նաև եւրոպական լեզուներում. Նրանք էլ v-ի դէմ w ունեն։ Զարմանալին այն է, որ ինչպէս նրանց v կրկնվելով դառնում է դուբլվէ (w), այնպէս էլ մեր ւ-ը» կըրկնվելով դառնում է վ (ւ l)։

Ես պէտք է այբուբենի աւանդութեան մասին էլ խօսէի, բայց յօդուածը երկարում է։ Կարճ կաւելացնեմ, որ դպրոցը չէ կարող աւանդապահ չը լինել. նա չէ կարող առ ոչինչ համարել պատմական ուղղագրութիւնը։ Ուրեմն թող առաջ գրականութեան մէջ լաւ ծեծվի պատմական ուղղագրութիւնը, և ապա թէ այդպէս զտվածը ապահովապէս աւանդվի նաև դպրոցին։

Սեդրաք Մանդինեան

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

11 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պետական Խորհրդի ֆինանսական մասնաժողովը, համաձայն 1910 թ. ելևմտի, ծովային մինիստրութեան նախահաշւով որոշեց 14.674.000 ր. յատկացնել նոր նաւերի կառուցման համար։

Սինօդին կից բացվեց ապահովագրական բաժանմունք։

Սենատը անհետևանք թողեց Սավիցկիի և միւս 6 հոգու վճռաբեկ բողոքագիրը, որոնց Վարշավայի դատաստանական պալատը դատապարտել է 2—9 ամսով բանտարկութեան Լեհական Թագաւորութեան ուսուցիչների ընկերութեանը պատկանելուն համար, որի նպատակն է բօյկօտ անել ռուսական դպրոցին։

ՆԻԿՕԼԱՅԵՎ։ Եկաւ փոխ-ծովապետ Կնեազէվը զինուորա-ծովային հաստատութիւնների գործերը վերաստուգելու համար։

Բաղ. դուման միջնորդում է 9.500.000 րուբլու փոխառութիւն կնքելու մասին։

ՕԴԵՍՍԱ։ Նահանգական ատեանը որոշեց փակել «Լեհական տուն» կրթական ընկերութիւնը։

ԿՐԵՄԵՆՉՈՒԳ։ Զինուորական դատարանը երկու հոգու՝ կողոպուտների և սպանութեան մէջ կասկածվելու համար՝ դատապարտեց մահվան պատժի։

ՌՈՄԱՆՈՎՕ - ԲՈՐԻՍՕԳԼԵԲՍԿ։ Բժիշկ Մակարօվին դատարանը դատապարտեց 6 տարով տաժանակիր աշխատանքների՝ օրիորդներին անբարոյականացնելու համար։

ԲՈՒԹԱՅԻՍ։ Ձերբակալվեց ազօվ-դօնեան բանկի մի ծառայողը, որ կասկածվում է կեղծ ընկալագրեր պատրաստելու մէջ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր { 5—7 ժ. երեկ.
Միքայէլեան փող., № 36. Տէլէֆօն № 388
(օ. մ.) 1216. 100—88

ԲԺԻՇԿ
Խ. Բ. ՄԵԼԻՔ-ԷՅՆԱԹԵԱՆ
Մասնագէտ սիֆիլիս, վեներական, միզասեռական և կաշուի հիւանդութիւնների։ Հիւանդների ընդունելութիւնը՝ առաւօտ. ժամը 9-ից մինչև 10-ը, երեկոյեան ժամը 5-ից մինչև 7-ը։
Կօնիւխօվսկայա փ., № 6, «Վէտցել» հիւրանոցի մօտ։ (Ն. Հ. շ.) 955. 100—69

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Ներքին և ջղային հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը
ամեն օր { առաւօտեան 9—12 ժ.
երեկոյեան 5—7 ժ.
Միքայէլեան փողոց, № 27.
(ա. օ.) 1087. 100—88

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը
ամեն օր (առաւօտեան ժ. 12½—2.
(երեկոյեան ժ. 5—7.
Կիրակի օրերը միայն առ. ժ. 11—12½.
Հասցէն՝ Սօլօլակ, Բէհբութեան փ., № 33.
(օ. մ.) 1044. 100—88

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելյամինօվսկայա փող № 8
(օ. մ.) 783. 100—92

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հրաւէր

Լրացած լինելով քաղաքիս ս. Կարապետ եկեղեցու երէցփոխի պաշտօնավարութեան ժամանակամիջոցը՝ ամսիս 14-ին, կիրակի, ցերեկվայ ժամը 12-ին նշանակված է յիշեալ եկեղեցում նոր ընտրութիւն երէցփոխի, որի մասին յայտնելով նոյն եկեղեցու չափահաս ծխականներին խնդրում եմ որոշած ժամին ներկայ լինել ժողովին՝ ընտրութեանը մասնակցելու։

Գործակալ՝ Ղևոնդ ք. Մամիկոնեանց
(շ. կ.) 294. 2—1

Հրաւէր

Կիրակի, ամսիս 14-ին, առաւօտեան ժամը 11-ին, քաղաքի ս. Լուսաւորիչ եկեղեցում լինելու է ծխականների վերջին և երկրորդ ժողով՝ ընտրելու երէցփոխ, որի մասին յայտնելով նոյն եկեղեցու չափահաս ծխականներին՝ խնդրում եմ շնորհ բերել եկեղեցի՝ ընտրութեանը մասնակցելու։

Գործակալ՝ Ղևոնդ ք. Մամիկոնեանց
(շ. կ.) 289. 2—1

Թիֆլիսի Փոխադարձ Ապահովագրական Ընկերութեան Վարչութիւնը

յայտնում է ի տեղեկութիւն Ընկերութեան պ.պ. անդամների, որ կիրակի, մարտի 14-ին, առաւօտեան ժամը 11-ին, Քաղաքային Վարկի ընկերութեան դահլիճում (Պուշկինսկայա փող. № 3) տեղի կունենայ

ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ,

փոխարէն փետրվարի 28-ին չը կայացած ժողովի, ուր քննութեան կառնվեն այն բոլոր հարցերը, որոնք նշանակված էին փետրվարի 28-ի ժողովի համար։ Միևնոյն ժամանակ Վարչութիւնը պատիւ ունի տեղեկացնելու պ.պ. անդամներին, որ, համաձայն ընկերութեան կանոնադրութեան § 26-ի, երկրորդ անգամ նշանակված ժողովը, յամենայն դէպս, կը համարվի օրինաւորապէս կայացված, ի նկատի չառած այդ ժողովին ներկայ գտնվող անդամների քանակը։

(շ. կ.) 256. 2—1

Типографія „Экономія" Большая Ванкская № 5.